



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



1914



1788

2388



[Faint, illegible handwriting, possibly bleed-through from the reverse side of the page.]



Թո՛ղ Կո՛ւկէ՛տ աստ Տանը Կղոցը որ ինձե՛
Գան , և յի՛ արԳելէ՛տ աստոնէ՛ . ինչո՛ւ որ
Ըստո՛ւթոյ ըսգա՛սորո՛ւ ընձը աստնէ՛ն ըրո՛ւնն
է : (Մարկ . Ժ . 14 :)

Մ Ե Ծ

ՃՇՄԵՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԶՏԻԿ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԵՐԵՆԻ Ե. Գ. ԶԸՐԶԻԼԻ

1857

1914

W. B. O.

UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT



PHYSICS DEPARTMENT

UNIVERSITY OF CHICAGO

1951



ՄԵԾ ՂՇՄԵՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Գ Լ ՈՒ Խ Ե

ՄԱՐԻԱՄ, ՅԱԿՈԲ ԵՒ ՀԱՅՐԵՐՆԻՆ

Պզտիկ աղջիկ մը և տղայ մը հօրերնուն հետ արտերը կը պտըտէին, և դացած ատեննին կը խօսէին: Պզտիկ աղջկան անունը Մարիամ էր, և տղունը Յակոբ:

Երբոր Մարիամ և Յակոբ հոգնեցան, հայրերնին մեծ ծառի մը շուքին տակը նստաւ: Բայց անոնք մէկ ըոպէէն աւելի հանդարտ չնստան, և մէկ քանի քայլ հեռանալով՝ խել մը վայրի ծաղիկներ ժողվեցին ու իրենց հօրը տարին ընծայ ըրին: Տեսակ տեսակ ծաղիկներ բուսած էր հօն: Ետքը Մարիամ և Յակոբ նստան, և հայրերնուն հարցուցին թէ ան ծաղիկները աղւոր չե՞ն:

Շատ գեղեցիկ են ըսաւ հայրերնին, և շնորհակալ եղաւ անոնց ընծային:

Քիչ մը ետքը նայիս որ թռչուն մը Մա-
րիամին և Յակոբին քովերը կը թռչըտէր :
Անոր փետուրները դեղին և մուխ գոյն էր •
և թռած ժամանակը կ'երգէր : Անոնք անոր
կը նայէին՝ մինչև որ աներևոյթ եղաւ :

Արտին մէջ քանի մը ոչխարներ՝ կովեր և ձիեր
կային : Ասոնք հանդարտաբար կ'արածէին :

Երբոր սղտիկ աղջիկն ու տղան նստան՝ թի-
թեռնիկները եկան անոնց քովը : Անոնք բնաւ
ջանք չըրին զանոնք բռնելու , ինչու որ ար-
գիլուած էր իրենց : Անոնք գոց ըրեր էին
սա հետեւեալ տողերը •

Պզտիկ ճանճ մըն ալ բնաւ՝ ես պիտի չմեռ-
ցընեմ •

Ինչու որ ցաւ կը քաշէ՝ երբ ես անոր վը-
նասեմ :

Արևը շատ տաք էր , բայց Մարիամ և
Յակոբ շուքին տակը նստած ըլլալնուն՝ անի-
կայ շատ չէին զգար : Անոնք լուռ չէին կեցեր :
Կ'ուզէք իմանալ ինչ քանի վրայ խօսեցին :
Հիմա պիտի պատմեմ մէկ քանի բաներ՝ որ
հայրերնին իր տղոցը ըսաւ :



Ա Ս Տ ՈՒ Ծ Ո Յ

Ե Ի Ի Բ Ա Ր Ե Ր Ա Ր ՈՒ Թ Ե Ա Ն Ը Վ Բ Ա Յ

Մտուած շատ բարերար է մեզի : Ինքը
կը սիրէ մեզ երջանիկ ընել : Մեր ամէն օրուան
կերակուր տուողը ինքն է • ինքը հագնելու
հանդերձ և բնակելու տուն կու տայ մեզի :
Բան մը չունինք որ ինքը տուած չըլլայ մեզի •
ոչ ալ մէկ զուարճութիւն մը՝ որ ինքը մեզի
համար պատրաստած չըլլայ :

Մտուած է որ արևը ծագել կու տայ մեզ
տաքցընելու համար : Ինքը մեզ կը կարո-
ղացընէ արտերը պտըտելու , և մեր բոլոր-
տիքը եղած ամէն զուարճալի տեսարաննե-
րը տեսնելու : Մենք կը սիրենք գեղեցիկ ծա-
ղիկները տեսնել • և Մտուած է որ աս ծա-
ղիկները ստեղծեց : Մենք կը սիրենք թռչուն-
ներուն անոյշ ձայնը լսել • և Մտուած է որ
աս թռչունները ստեղծեց մեզ զուարթացընե-
լու համար : Մենք մեր պարտէզին մէջ ծա-
ռերուն վրայ բուսած անոյշ պտուղները կը
վայելենք • բայց չըլլայ թէ աս պտուղները
Մտուածէ տրուած ըլլալը մոռնանք : Թէ որ

ինքը չուզէր պտուղ՝ ծաղիկ և թռչուն տալ՝
մեզի, մենք թէ և կրնայինք ապրիլ՝ բայց մեր
զուարճութիւնը պակաս պիտի ըլլար :

Աստուած բարերար է բոլոր կենդանի արա-
րածներուն : Մեր հիմակուան տեսած կովե-
րը՝ ոչխարները և ձիերը իրմէն տրուած կեան-
քը կը վայելեն : Աստուած կը հոգայ թռչ-
չունները և ճճիները . թէ որ ինքը զանոնք
չպահէ և չկերակրէ, անոնք պիտի կորսուին :
Աստուած զինքը սիրողները կը սիրէ, թէ և
ինքը բարերար է չարերուն անգամ : Անոնց
ամէն վայելած բարիքները տուողը Աստուած է :
Ինքը անոնց վրայ կը խորհի, թէ և անոնք
իր վրայ չեն խորհիր :

Աստ անգամ մտմտանք Աստուծոյ վը-
րայ, և շնորհակալ ըլլանք իր մարդասիրու-
թեանը համար, և զինքը սիրելու համար իր-
մէն օգնութիւն խնդրենք :

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ծ Ա Ղ Ի Կ Ը

Ո Ւ Ի Ր Ս Ե Ր Մ Ը

Քանի որ ծառին տակը նստեր էին, հայ-
րերնին անոնց տուած ծաղիկներէն մէկ հատ

մը առաւ , և հարցուց անոնց թէ՛ Ասոր պէտ
մէկ հատ մը կրնա՞ք շինել :

Չէ , ըսաւ Մարիամ . չենք կրնար : Աս
աշխարհիս մէջ մէկը չկայ որ կարող ըլլայ կա-
տարեալ ծաղիկ մը շինել :

Աս ինչպէս գիտես Մարիամ , հարցուց
հայրը :

Աղէկ գիտեմ . ինչու որ ծաղիկները սեր-
մերէ առաջ կու գան : Անիկայ գիտեմ , ին-
չու որ դուն մէկ քանի սերմեր տուիր ինձի
իմ պարտէզիս համար , և օգնեցիր ինձի զանոնք
ցանելու . և հիմա անոնք ծաղիկներ տուին :

Աւրեմն կրնաս ըսել ինձի թէ սերմերը ո՞ւր
կից ելած են :

Անոնք դուն ծախու առիր , անանկ չէ՞ ,
հայր , ըսաւ Յակոբ :

Այո՛ , ըսաւ հայրը . բայց սերմերը ո՞վ շինեց :

Մարիամ բան մը չէր կրնար ըսել . հա-
պա կը կարծեր թէ մէկը չէ շինած անոնք :
Ինքը հօրմէն խնդրեց սերմերուն ուր շինուի-
լը կամ գտնուիլը իրեն ըսելու :

Ան ատենը հայրը մէկ չոր թուամած ծաղիկ
մը առաւ , և մէկ քանի տերեւներ փրցուց , և
ծաղիկին մէջ սերմերուն պահուած տեղը ա-
նոնց ցուցունելով ըսաւ թէ՛ Արբոր ծաղիկնե-
րը սկսին թուով , սերմերը շարունակ կը

մեծնան և կը հասուննան , մինչև որ ժողովուրին
կամ գետինը իյնան : Աւրեմն կը տեսնա՞ք , ըսաւ
ինքը , որ եթէ ծաղիկները սերմերէն կ'ելլեն ,
առաջ սերմերը ծաղիկներէն ելած պիտի ըլլան :
Բայց հիմա ինծի կրնա՞ք ըսել թէ ամենէն առ-
ջի սերմերը և ծաղիկները ի՞նչպէս աշխարհ
եկան :

Կարծեմ թէ Աստուած զանոնք հոս դրած
պիտի ըլլայ , ըսաւ պզտիկ աղջիկը :

Եյ՛ , Աստուած հոն դրաւ զանոնք , ըսաւ
հայրը . և թէ որ ինծի մտիկ ընէք , ձեզի կը
խօսիմ ատոր վրայօք :

Գ Լ Ո Ւ Խ Դ

Ա Ս Տ Ո Ւ Ժ Ո Յ

Ե Ի Ի Ր Գ Ո Ր Ժ Ե Ր Ո Ի Ն Վ Ր Ս Յ

Ժամանակաւ աշխարհ չկար . ո՛չ արե՛՛ ոչ
լուսին և ոչ աստղ : Ասիկայ շատ ժամանակ
առաջ էր :

Բսան տարի՛ առաջ էր , հարցուց Յա-
կոբ :

Ինքը շատ պզտիկ տղայ մըն էր , և կը
կարծէր թէ մէկ տարին շատ երկայն ժամա-

նակ մըն էր • մինչև քսան կրնար համրել •
 և իր խելքին նայելով՝ քսան տարին շատ չափազանց երկայն ժամանակ մըն էր • դուք
 ձենէ կրնաք դասել թէ աս տղան խելացի
 կամ գիտուն տղայ մը չէր : Ինքը ան
 ատենը չորս տարեկան չկար : Աս հարցումը
 ընելուն համար հայրը անոր վրայ չինդաց •
 բայց ըսաւ թէ քսան տարիէն աւելի է • հարիւր
 անգամ քսան տարիէն աւելի է : Թէ և աշխարհը
 չկար , բայց Աստուած կար :

Ան ատենը Աստուծոյ հաճոյ եղաւ որ աշխարհ
 մը ըլլայ , և ինքը անիկայ ստեղծեց : Աշխարհը
 շինուելու համար նիւթ չկար , բայց
 Աստուած ոչինչէն անիկայ ստեղծեց : Ինքը
 նաև ցորեկը ծագող արևը , և գիշերը ծագող
 լուսինը ու աստղերը ստեղծեց :

Աստուած մարդը ստեղծեց աշխարհի մէջ
 բնակելու համար , ու նաև ամէն տեսակ անասունները՝
 թռչունները և ճճիները : Ինքը նաև
 ան մեծ ծովը ստեղծեց , որուն մէջ ձուկե-
 րը կը բնակին :

Բայց կենդանի արարածները չստեղծած՝ ինքը
 անոնց համար աշխարհը սլատրաստեր էր ,
 ծառերը ու տունկերը անոնց օգտին և գործածու-
 թեանը համար • և Աստուած ծառերը ,
 տունկերը ու ծաղիկները ստեղծելու ատենը

ըսաւ թէ անոնք սերմ ալ ունենան , որ ուրիշ ծառեր՝ տուռներ և ծաղիկներ ելլեն անոնցմէ . Աստուծոյ մեծ զօրութիւնն է որ սերմէն ծաղիկներ առաջ կը բերէ , ինչպէս որ դուք ըսիք :

Գ Լ Ո Ւ Խ Ե

Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ

Ա Մ Է՛Ն Բ Ա՛Ն Ս Տ Ե Ղ Ճ Ե Յ

Աս քու ըսածներէդ զատ Աստուած ուրիշ բան ստեղծեց : Աս հարցունողը Մարիամն էր :

Ինքը ամէն բան ստեղծեց , ըսաւ հայրը : Տեսած բաներէդ մէկը չկայ որ Աստուած ստեղծած չըլլայ : Եղած բաներէն , կամ ներկայ բաներէն մէկը չկայ որ ինքը ստեղծած չէ :

Իայց կարծեմ թէ իմ հանդերձներս , ասեղները , գնդասեղները (Բօփլո) և մեր տուռերը Աստուած ինքը չէ ստեղծած . անանկ չէ՞ հայր , հարցուց աղջիկը :

Իմ աղջիկանս հանդերձը զանազան բուսած բաներէն շինուած են , և Աստուած աս բաները բուսցունել տուաւ : Գնդասեղները ,

ասեղները և շատ ուրիշ օգտակար բաները մարդիկ հողէն ելած մետաղներէն (Տափէն) կը շինեն • բայց Աստուած ան մետաղը ստեղծեց և հոն դրաւ : Մարդիկ՝ փայտէ և քարէ տուններ կը շինեն • բայց փայտը և քարը ստեղծողը մարդը չէ , հապա Աստուած : Աստուծոյ հաճոյ եղաւ մեզի զօրութիւն և ճարտարութիւն տալ՝ իր ստեղծած բաները գործելու մէկտեղելու • բայց որչափ որ գործենք կամ փոխենք զանոնք , անոնց ստեղծողը Աստուած է : Գիտէ՞ք ինչ ըսել կ'ուզեմ :

Մարիամ , Յակոբ կը կարծէին թէ հօրերնուն ըսածը կը հասկընային • և ես ալ անանկ կը կարծեմ • ինչու որ՝ թէ և անոնք պզտիկ էին , բայց ջանք կ'ընէին ան ամէն բաները սորվելու , որ ճսողքներնին կ'ուզէին իրենց սորվեցունել :

Գ Լ Ո Ւ Խ Թ Թ

Գ Ր Ք Ա Ր Ա Ն Ը

Մարիամ , Յակոբ և հայրերնին ծառին տակը նստած հանգչելէն ետե՛ կրկին ճամբայ ելան և նեղ զուարճալի փողոց մը մտան , ուրկէ իրենց տունը կ'ելէր : Ան ատենը Մարիամ

և Յակոբ մօրերնուն հետ տղոց սենեակը գացին , և հայրերնին ալ իր սենեակը գնաց : Են օրը հայրերնին կրկին չտեսան . միայն թէ պատկերնէն առաջ քիչ մը ժամանակ անոր գիրկը նստան :

Եռտու մը՝ իրենց ժուռ գալէն քանի մը օր ետև՝ հօրը սենեակին դուռը կամաց մը չալուեցաւ , և ինքը ըսաւ , Հրամմեցէք : Մէկը ներս չմտաւ . և երբ որ ելաւ դուռը քացաւ տեսաւ որ իր պզտիկ տղան և աղջկը հոն կայներ էին , և կը խնդրէին իր քովը երթալ :

Եյո՛՛ կրնաք գալ , ըսաւ ինքը , թէ որ խելօք կենաք գիր գրած ժամանակս : Աստահ կրնամ ըլլալ ձայն հանելնուդ :

Եյո՛՛ հայր , ըսաւ Յակոբը , թէ որ ինձի պատկերի գիրք մը տաս նայելու :

Են սենեակին մէջ շատ գիրքեր կային սեղանին վրայ և դարակներուն (բաճ) վրայ , և գրքարանին մէջ , և անոնք աղէկ գիտէին թէ անոնցմէ ոմանք պատկերներով լեցուն էին . ինչու որ շատ անգամ տեսած էին : Գետինը նստան , և առջևնին ցած աթոռ մը ունէին սեղանի տեղ և հայրերնին պատկերի գիրք մը տուաւ անոնց :

ՍՈՒՐԲ ԶՐԵՇՏԱԿՆԵՐՈՒՆ

ՎՐԱՅ

Հայր՝ շատ զբաղեալ ես , ըսաւ Մարիամ
ականջն ՚ի վար՝ խել մը պատկերներ նայելէն
կտքը :

Շատ զբաղեալ չեմ , պատասխանեց Հայ-
րը . ի՞նչ կ'ուզես ինձի ըսել :

Կ'աղաչեմ որ ըսես ինձի թէ աս պատկերը
որո՞նն նմանութիւնն է : Ատիկայ առաջուց տե-
սած չեմ . կնիկ մը կայ ճերմակ հանդերձով ,
և թռչունի պէս թևեր ունի :

Այլանդակ պատկեր մըն է ատիկայ , ըսաւ
Հայրը . հրեշտակի տեղ դրված է , բայց բնաւ
չեմ կարծեր թէ հրեշտակները աս պատկերին
պէս ըլլան :

Հրեշտակները ի՞նչ են , մեզի կ'ըսես Հայր ,
ըսաւ Յակոբ :

Անոնց վրայօք քիչ մը ձեզի կը խօսիմ ,
և բոլոր գիտցածներս Աստուածաշունչէն սոր-
ված եմ : Հրեշտակներ կան որ սուրբ են ,
և որոնք Աստուած ստեղծեց իրեն ծառայե-
լու համար : Մարդը և աշխարհը ստեղ-

Տեղէն առաջ՝ Աստուած հրեշտակները ստեղծեց : Անոնք մեզի պէս չեն . մեր մարմինին պէս մարմին չունին : Անոնք երկինքը կը բնակին , և կը սիրեն զերեք ստեղծող մեծ և սուրբ Աստուծոյն ծառայել : Հատ արագաշարժ և զօրաւոր են Աստուծոյ հրամայած տեղը երթալու և իր պատուէրները կատարելու , և շատ խելացի են Աստուծոյ կամքը իմանալու : Բոլոր իրենց զօրութիւնը և իմաստութիւնը Աստուծմէ առած են : Առանց Աստուծոյ բան մը չեն կրնար ընել :

Հրեշտակները մենք չենք կրնար տեսնալ : Մեր աչուրները հոգիներ տեսնալու համար ստեղծուած չեն . և հրեշտակները հոգի են : Երբեմն՝ երբոր Աստուած հաճեցաւ որ մարդիկ հրեշտակները տեսնեն , անոնք մարմին մը առին և մարդու պէս երեցան : Թէ և մենք չենք կրնար զանոնք տեսնել , բայց անոնք կրնան մեզ տեսնել : Մենք չենք գիտեր թէ որչափ անգամ հրեշտակները մեզ կը տեսնեն , կամ թէ քանի հատ կայ մեր բոլորտիքը ամէնօր և ամէն գիշեր : Բայց մէկ բան մը գիտենք , թէ Աստուծոյ աչքը միշտ մեր վրան է : Ասիկայ բնաւ մոռնալու չենք :

Աստուծոյ սուրբ հրեշտակներուն թիւը չենք գիտեր : Անոնց թիւը խելքերնուս հասածէն

աւելի է : Ամենքը Աստուծոյ կ'սպասեն իր կամքը
ընելու , իր հրամանովը կ'երթան կու գան և
երջանիկ են , ինչու որ սուրբ են : Հրեշտակներ
ալ կան՝ որ երկինքը չեն , ինչու որ սուրբ չեն :

Թէ որ մենք Աստուծոյ հազանդ ըլլանք ,
մենք ալ երջանիկ պիտի ըլլանք . և թէ որ
իր կամքը կատարենք երկրիս վրայ , մենք Աս-
տուծոյ հրեշտակները պիտի տեսնենք , և ա-
նոնց հետ երկինքը պիտի բնակինք մեր մար-
միններուն մեռնելէն ետև :

Գ Լ Ո Ի Խ Ը

Գ Բ Բ Ա Ր Ա Ն Ի Ն Ս Ե Ն Ե Ա Կ Ը Ե Ղ Ս Ժ

Ո Ի Բ Ի Ը Խ Օ Ս Բ Ե Բ Ը

Յակոր և Մարիամ շատ հարցումներ ըրին
հօրերնուն , որոնց ինքը կարող չէր պատաս-
խան տալու : Պզտիկ տղու մը աւելի դիւրին
է հարցում ընել , քան թէ իմաստուն ծը-
նողքի մը իր տղուն բոլոր ուղածները իրեն
զրուցել :

Մարիամ հարցուց թէ հրեշտակները ո՞ր-
չափ մեծ են , կրնան ըսել ինձի հայր :

Չէ՛ , չեմ կրնար ըսել , ըսաւ հայրը :
 Հիմա աս սենեակին մէջ հրեշտակ կայ ,
 հարցուց Յակոբ :

Իրաւ որ տղան , ըսաւ հայրը • աստ հարց-
 մանը չեմ կրնար պատասխանել :

Ան ատենը Մարիամ ուրիշ բան մըն ալ
 հարցուց , և կրկին հայրը ըսաւ • սիրելի աղ-
 ջիկս , իրօք չեմ գիտեր :

Բայց հայր՝ ես կը կարծէի թէ դուք ամէն
 բանի վրայօք տեղեկութիւն ունէիք : Ինչո՞ւ
 չեմ գիտեր կ'ըսես :

Անոր համար որ պէտք է ճշմարիտը խօ-
 սիմ : Քիչ մը բան գիտեմ • բայց շատ
 բաներ կան՝ որոնց վրայօք ամենեւին բան մը
 չեմ գիտեր :

Քու բոլոր գիրքերդ շինողը քեզմէ աւելի
 գիտէր , ըսաւ Յակոբ :

Հայրը ըսաւ • մէկ մարդ մը գրած է բո-
 լոր իմ գիրքերս : Օգնազան մարդոց գրածն է :

Ուրեմն քանի՞ մարդ բոլոր աս սենեակին
 մէջն եղած գիրքերը գրած են , ըսաւ տղան :

Կրկին կ'ըսեմ , չեմ գիտեր :

Ո՛հ հայր , ըսաւ աղջիկը շփոթած , որչափ
 ստէպ չեմ գիտեր կ'ըսես աս առտու :

Սիրելի տղաքս , ուրիշ բան չեմ կրնար ը-
 սել : Պէտք է որ պատասխան տամ , երբոր

խօսիք ինձի : Պատասխան չտալ պաղ բան մը
 պիտի ըլլայ : Սակայն ձեր ըրածին նման հար-
 ցումներուն ուրիշ պատասխան չեմ կրնար տալ ,
 բայց միայն իմացընել թէ չեմ գիտեր՝ կամ
 չեմ կրնար ըսել : Բայց թէ որ մէկ երկու
 ըոպէ լռիկ կենաք , գիտցած բաներէս բան մը
 կ'ըսեմ ձեզի . և անանկ բան մը որ՝ ես կ'ու-
 ղեմ որ դուք ալ գիտնաք :

Աստի անոնք լռիկ մնացին , և հայրը Աստու-
 ծոյ իմաստութեանը վրայօք խօսիլ սկսեց :

Գ Լ Ո Ւ Ի Թ

Ա Ս Տ Ո Ւ Ծ Ո Յ Ի Մ Ա Ս Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ը

Վ Ր Ա Յ

Աստուած իմաստուն է : Ինքը ամէն բան
 գիտէ : Մէկը չկայ որ կարող ըլլայ Աստու-
 ծոյ նոր բան մը ըսել : Ինքը միշտ իմաստուն
 էր : Երբոր ոչ հրեշտակ կար՝ ոչ մարդ՝ ոչ
 արե՛՛ ոչ աստղ և ոչ ալ աշխարհ , ինքը աս
 աշխարհը ստեղծելէն ետեւ հոն բնակելու մար-
 դոցը ամէնն ալ գիտէր : Մեր աս օրուան ա-
 մէն խօսած խօսքերը ինքը գիտէ , և առջի

ամէն խօսածներնիս ալ : Մեր ամէն խորհուրդներուն ինքը տեղեակ է , նաև առաջուց խորհածներնուս , կամ խորհելիքներնուս ալ՝ քանի որ այսինքն : Աս աշխարհը բնակող մարդիկներուն կեիկներուն և տղաքներուն ըրածներուն ծանօթ է :

Աստուծոյ դժուար չէ բոլոր աս բաները գիտնալը , և իմ պատմածներէս՝ կամ ձեր խորհածներէն շատ աւելի գիտնալը . ինչու որ՝ իրեն համար դժուար բան մը չկայ :

Թէ որ մենք բան մը գիտենք , անիկայ սորված ըլլանուս է : Մենք կամաց կամաց կը սորվինք , բայց Աստուած ինքնիրեն ամէն բան գիտէ : Աստուծոյ՝ մէ՛կը չկրնար բան մը սորվեցունել :

Ուրիշ բան մ'ալ պիտի ըսեմ ձեզի , որ գիտնալու էք : Աստուած հաճեցաւ իր Սուրբ Գիրքին մէջ մեզի ըսել թէ ինք պատրաստ է մեզ իմաստուն ընել , թէ որ ասիկայ մենք իրմէն խնդրենք : Ինքը Սուրբ Գիրքը մեզի տուած է՝ ճշմարիտ իմաստութիւնը մեզի սորվեցունելու :

Արբոր քիչ մը մեծնաք , պիտի սորվիք Աստուծոյ Խօսքը կարդալ : Բայց տակաւին կարդալ չսորված պզտիկ տղայ մը կրնայ Աստուծմէ իմաստութիւն խնդրել : Աստուած

բարի է , ինչպէս որ իմաստունն ալ է , և ին-
քը միշտ պատրաստ է ձեզի պէս պզտիկ տղ-
ճաքներուն աղօթքները լսելու :



ԳԼՈՒԽ Ժ

ԲԼՈՒՐՆ ՈՒ ԾՈՎԸ

Բարձր բլուր մը կար՝ որ իրենց տունէն
շատ հեռուն չէր , և իրենք երբեմն երբեմն
մինչև անոր գագաթը կ'երթային . ու պզտիկ
փայտէ կամուրջէ մը կ'անցնէին հոն երթալու
համար :

Բլուրին գագաթը մէկ քանի ծառեր կային ,
և անոնց տակն ալ փայտէ նստարաններ : Բը-
լուրը դալար խոտով և գոյնզգոյն ծաղիկներով
ու բոյսերով ծածկուած էր :

Բայց իրենց հօրը ան բլուրին գագաթը
ելել ուզելուն մասնաւոր պատճառը ծովը տես-
նալ էր : Աս ծովը բլուրին անդի կողմն էր :
Ծովեզերքը շատ մօտ էր , և երբեմն եզեր-
քին վրայ եղած աւազները ծովը կը ծածկէր
և բլուրին ստորոտը կը ծեծէր :

Բլուրին ստորոտը մէկ քանի տնակներ կային
ծովէն քիչ մը հեռուն , որոնց մէջ ձկնորս-

5151

ներ իրենց ընտանիքներովը կը բնակէին : Եւ
մարդիկները նաւակներ և ուռկաններ ունէին ,
և անոնցմով ծովին վրայ կը պտըտէին , և ուռ-
կաններով ձուկ կը բռնէին :

Հայրերնին անոնց ծանօթ ըլլալով , երբեմն
ան տնակներուն մէկը կ'երթար՝ հոն բնակող
մարդիկներուն հետ խօսելու : Մարիամ ու
Յակոբ շատ անգամ անոր հետ կ'երթային :

Չկնորսներուն նաւակներէն զատ՝ շատ ան-
գամ մեծ նաւեր ալ կ'ըլլային ծովին վրայ , և
անոնց նաւած ժամանակը հայրերնին կ'ըսէր ի-
րենց թէ ինքը կարծեօք գիտէր անոնց ուր
երթալը կամ ուրկէ դալը . և ուրիշ շատ բա-
ներ ալ կ'ըսէր , որ իրենք կ'ուզէին լսել :
Կ'ուզէ՞ք իմանալ անոր ուրիշ ինչ բանի վրայօք
խօսիլը : Ուրեմն հետևեալ գլխուն մէջ կը
պատմեմ ձեզի :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ե

Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ Ա Մ Է Ն Տ Ե Ղ Է

Յակոբ և Մարիամ ու հայրերնին ծառե-
րուն տակը եղած նստարանին վրայ նստեր էին
բլուրին գագաթը : Ծովը անշարժ էր , ինչու

որ շատ հով չկար զանիկայ խռովելու : Արե-
գակը պայծառ կը փայլէր , և ծովը ապակիի
կը նմանէր : Շատ հեռուն ծովուն վրայ նաւ
մը կար բարձր կայմերով և ճերմակ առա-
գաստներով . ո՛հ ինչ աղւոր տեսարան մըն էր
անիկայ . ծովը , արեգակը , նաւը , բլուրին
ստորոտը եղած տնակները և ձկնորսները , որ
իրենց ուռկանները կը նորոգէին : Բոլոր առ
տեսարանները , Վարիամն ու Յակոբը ուրա-
խացուցին՝ հայրերնին զիրենք բլուրին գագա-
թը տանելուն համար :

Հայրերնին ան մարդոցը վրայօք կը պատ-
մէր անոնց , որոնք գրեթէ միշտ նաւերու մէջ
կը կենային : Ասե ուրիշ մարդոց վրայօք ալ
կը պատմէր , որ հարիւրաւոր և հազարաւոր
մղոն հեռու ուրիշ երկիրներ կ'երթային ծովին
միւս կողմը . և տղաքն ալ հօրերնուն ըսա-
ծը մտիկ կ'ընէին :

Ետքը ինքը անոնց ըսաւ թէ հեռաւոր եր-
կիրներ ապրող մարդիկներէն ոմանք թուխ
մորթ ունին , և ոմանք գրեթէ բոլորովին սև
են , և անհասկանալի օտար լեզուներ կը խօ-
սին . և թէ ան երկիրներուն ծաղիկները և
պտուղները մեր երկրին ծաղիկներէն և պը-
տուղներէն շատ տարբեր են : Բայց մէկ բան
մը կայ , որ ամէն տեղ մի և նոյն է :

Մարիամ հարցուց . ինչ է անիկայ , հայր :
 Ինքը պատասխան տուաւ : Անանկ երկիր
 մը չգտնուիր , ուր որ Աստուած հոն ներկայ
 չըլլայ : Երբեմն շատ ժամանակի կարօտ կ'ըլ-
 լայ սա աշխարհիս ամենէն հեռու մէկ տեղը
 երթալը . բայց Աստուած հոն ալ է , ինչպէս
 որ հոս : Աշխարհիս մէջ շատ տեղ մեծամեծ
 անբնակ անտառներ կան , բայց Աստուած հոն
 ալ է : Ինքը ամէն տեղ է :

Բայց Աստուած երկինքը չէ՞ , հարցուց
 Յակոբը :

Այո՛ երկինքն է . միշտ երկինքն է , բայց
 ինքը երկրիս վրայ ալ է . միշտ երկրիս վրայ :
 Աստուած միշտ մեր եղած տեղն է : Մենք
 բնաւ մինակ չենք . ինչու որ Աստուած հե-
 տերնիս է , և ինքը մեր ըրածը՝ ըսածը և խոր-
 հածը կը դիտէ : Աս ճշմարտութիւնը բնաւ
 մոռնալու չենք՝ թէ Աստուած ամէն տեղ է ,
 և Աստուծոյ արգիլածը ընելէն՝ կամ ըսելէն՝
 կամ խորհելէն վախնալու ենք :



Գ Լ Ո Ւ Խ Դ Ի

Կ Ո Ւ Ռ Ք Ը

Մարիամին և Յակոբին հայրը իր պզտիկ զաւկրներուն ծնած տանը մէջ շատ տարիներ քնակած էր : Բայց ատենօք նաւով ճամբորդութիւն ըրած էր , և իր պատմած երկիրներէն շատերը գացած էր : Մարիամ ու Յակոբ իր պատմութիւնները լսելու երբէք չէին ձանձրանար :

Հիմա , հայր , ըսաւ Մարիամ , քու սենեակիդ մէջ ունեցած պաճուճապատանքիդ (պէպէ+) երկրպագողներուն վրայօք կը պատմես մեզի :

Ե,յո՛ , կրկին կը պատմեմ թէ որ կ'ուզէք , ըսաւ հայրը : Են պզտիկ արձանը որ դուք պաճուճապատանք կը կոչէք , հեթանոսները ~~աստուծոյ~~ կը կոչեն : Աստուածաշունչը անոր կոչման անուն կըլ տայ : Մարդուն մէկը զանիկայ իր խրճիթը դարանին (բաճ) վրայ կը պահէր , և կ'ըսէր ինծի թէ զանիկայ հոն պահելուն պատճառը՝ զինքը մնասէ պաշտպանելու համար էր : Ինքը սովորութիւն ունէր անոր հետ խօսելու . և անոր առջին կերակուր ու ծաղիկ կը դնէր . և երբոր գետը ձուկ բռնելու կ'երթար , խօսք կըլ տար իր աստուած

Տը աղէկ պահել , թէ որ իր ուռկանը ձուկ
բերել տալու ըլլայ :

Բայց գիտէք թէ ատ կուռքին պէս փայտի
կտոր մը չկրնար ո՛չ մէկուն օգուտ մը ընել
և ոչ ալ մէկէ մը օգուտ քաղել , ինչու որ
թէ և երեսի ձև ունի , աչուրներով՝ ականջ-
ներով՝ բերնով և քիթով , բայց չկրնար ոչ
տեսնել՝ ոչ լսել՝ ոչ ալ համ և կամ հոտ
առնել : Աստի օր մը խեղճ մարդը շատ բար-
կացաւ իր կուռքին՝ ձուկ չկրնալ բռնելուն
համար , և մէկ դի ձգեց , անկէ աւելի աղէկ
կուռք մը առնելու համար : Աստի աս կեր-
պով կուռքը իմ ձեռքս հասաւ :

Ինչպէս յիմար մարդ մըն է եղեր ան , ը-
սաւ Յակոբ :

Շատ յիմար էր , ըսաւ հայրը , և շատ ալ
տգէտ . վասն որոյ մեղքընալու արժանի էր :
Օհնքը և բոլոր աշխարհը ստեղծող ճշմարիտ
Մտուծոյն վրայօք բան մը չէր գիտեր : Մենք
ուրախանալու ենք Մտուածաշունչ ունենալ-
նուս համար , որ մեզի կը սորվեցունէ և մեզ
իմաստուն կ'ընէ : Ալ ձեռքերնուս եկածին
չափ ջանալու ենք Մտուածաշունչը չունեցող-
ներուն խրկել . և աղօթք ընելու ենք որ ա-
նոնք իրենց կուռքերէն դառնան ճշմարիտ և
կենդանի Մտուծոյ ծառայելու :

ԱՍՏՈՒԱԾ ՍՈՒՐԲ ԵՒ ԱՐԴՍՐ Ե

Ուրիշ բան մը կը պատմե՞ս մեզի , հայր ,
ըսաւ Մարիամ :

Ե՛յո՛ , բայց ի՞նչ բանի վրայօք ըլլայ , ը-
սաւ հայրը :

Ո՛հ՛ ան մարդիկներուն և իրենց կուռքե-
րուն վրայօք թող ըլլայ :

Հատ աղէկ , ուստի ձեզի կ'ըսեմ թէ ա-
սանկ կուռքերու երկրպագողները շատ գէշ
մարդիկ են : Մէկզմէկ չեն սիրեր , իրար կը
խաբեն , իրարու սուտ կը զրուցեն , իրարմէ
կը գողնան , և շատ անգամ ալ մէկզմէկ կը
մեռցունեն : Պզտիկ տղաքներն անգամ շատ
գէշութիւն կ'ընեն , և անոնց մեղք ըլլալը
սորվեցընող չկայ :

Անոնք կ'ըսեն թէ իրենց չաստուածները չեն
սրգողիր , երբոր մէկզմէկ մնասեն , բայց թէ՛
գոհ կ'ըլլան անանկ բաները տեսնելուն , և
կ'ուզեն բաժին մը ունենալ՝ խաբելով և գո-
ղութիւն ընելով վաստրկուած բաներուն մէջէն :

Ուստի անոնք շատ չար աստուածներ եղած
պիտի ըլլան , ըսաւ պզտիկ աղջիկը :

Թէ որ աս տգէտ մարդիկներուն անոնց վը-

րայօք բոլոր պատմածը ճշմարիտ է, անոնք շատ
 չար եղած պիտի ըլլան, պատասխանեց հայրը :
 Բայց իրօք աստուածներ չեն ամենեին, միայն
 փայտի՝ կամ քարի՝ կամ հողի՝ կամ արծաթի
 կտորուանքներ են, զանազան ձևերով շինուած :
 Մարդուն չար սիրտն է որ ասանկ խորհուրդ-
 ները իր գլխուն մէջ կը դնէ, և խորհիլ կու-
 տայ թէ աստուած մը չար բաներ կրնայ սի-
 րել : Մենք անոնցմէ աղէկ դիտենք, բայց
 չէ թէ բնութեամբ քարի սիրտ ունենանուս
 համար : Տղաքներս, ըսէք ինձի, մեր անոնցմէ
 աղէկ դիտնանուս պատճառը ի՞նչ է :

Տղաքները կը կարծէին թէ աղէկ սորված
 ըլլանուն համար էր :

Բայց մենք աղէկ սորված չպիտի ըլլայինք, թէ
 որ Աստուածաշունչը մեզի առաջնորդ չու-
 նենայինք : Աստուածաշունչն է որ մեզ ու-
 րիշներէն աւելի իմաստուն կ'ընէ : Աստուածա-
 շունչն է որ մեզի կը սորվեցունէ Աստուծոյ
 սուրբ ըլլալը : Իր գործքերը՝ խօսքերը՝ և
 խորհուրդները, բոլորն ալ սուրբ են. և ին-
 քը սրբութիւն կը սիրէ : Մեր Աստուածը
 արդար է բոլոր իր ճամբաներովը, և սուրբ է
 բոլոր իր գործքերովը :



ԳԼՈՒԽ ԺԴ

ՏՂԱՆ ՈՒ ՁԻՆԸ

Ժամանակ է մեզի տուն դառնալու , ըսաւ
 հայրերնին : Սայէ , արեգակը ամպ վ մը ծած-
 կ լեցաւ , և շուտով բոլորովին աներևոյթ
 պիտի ըլլայ : Պիտի երևնայ թէ ծովը կը մըտ-
 նէ . և ան ատենը պառկելու ժամանակ պիտի
 ըլլայ բոլոր պզտիկ տղաքներուն :

Աստի Մարիամ ու Յակոբը հօրերնուն
 հետ , իրենց նստարանը ծառերուն տակը ձգե-
 լով՝ բլուրէն վար իջան՝ տուն գացին :

Երբոր ճամբուն մէջ մտան , մեծ տղայ մը
 տեսան որ ձիու մը առջևէն ինկած կը տա-
 նէր . և ձին ծանր բեռով կառք մը կը քա-
 շէր : Իեռը շատ ծանր ըլլալով ձին շատ դը-
 ժուար կը քաշէր . ու թէ և բոլոր իր ուժո-
 վը ջանք կ'ընէր , բայց շատ կամաց կամաց
 կ'երթար :

Եսոր համար տղան բարկացաւ . ինքը ու-
 զեց որ ձին շուտով քալէ , և իր ձեռքը բռն-
 նած մեծ գաւազանովը խեղճ ձիին սաստիկ կը
 զարնէր : Մէյ մը ոտքերուն կը զարնէր և
 մէյ մը գլխուն . և շատ գէշ խօսքեր կը
 զրուցէր : Իրօք շատ բարկացաւ :

Մարիամ բուխ սիրտ մը ունէր , և ան
անգթութիւնը չէր ուզեր տեսնալ : Արցունք
թափելով , կ'ըսէր . ան տղան շատ գէշ է որ
իր ձին ասանկ կը ծեծէ :

Հայրն ալ անանկ կը խորհէր . և քիչ մը
կայնեցաւ տղուն հետ խօսելու : Ինքը ըսաւ
անոր , ձիուդ մի' բարկանար և մի' ծեծեր ա-
նիկայ . ան կըրցածին չափ կը ջանայ իր ծանր
բեռը քաշելու :

Տղան պատասխան չտուաւ . բայց ցուցուց
թէ ինքը կ'ամբնար իր ձիուն ըրած անգթու-
թիւնը տեսնելուն համար :

Ան ատենը հայրերնին իր գրպանէն (էկոյ)
մէկ քանի պզտիկ գիրքեր հանեց , և անոնցմէ
մէկը տղուն տուաւ , և ըսաւ . ասիկայ քուկդ
ըլլայ . երբոր ժամանակ ունենաս , կարդա՛ն ա-
նիկայ . բայց կրկին ձիդ չծեծելուդ համար
խօսք տուր ինձի , ըսաւ ան :

Տղան խօսք տուաւ . և ան ատենը Մա-
րիամ , Յակոբ և հայրերնին անկէ զատուեցան :



ԱՍՏՈՒԱԾ ԲԱՐԻ Է

ԲԱՐԻ ՉԵՂՈՂՆԵՐՈՒՆ ԱՆԳԱՄ

Հայր , ինձի կու գայ թէ ան տղան շատ
գէշ տղայ մըն էր իր ձին անանկ ծեծելուն
համար , ըսաւ պզտիկ Յակոբը . և թէ որ ես
ըլլայի՝ անոր գիրք մը չպիտի տայի :

Կարելի է իմ տղաս անգամ՝ չգիտեր իր ինչ
ընելու պարտական ըլլալը ամէն ժամանակ , և
տղաքները չեն կրնար դատել մեծ մարդոց ը-
նելիքը . անանկ չէ՞ , Մարիամ :

Ե, յո՛ հայր , ըսաւ Մարիամ . բայց ան ան-
գութ տղուն գիրք մը տալուդ պատճառը
մեզի կ'ըսեն :

Իր սիրտը կակուղցունելու համար : Յոյ՞
ունիմ թէ երբոր ինքը տեսաւ որ ես չբար-
կացայ , հապա միայն տրտմեցայ , գուցէ ինքն
ալ պիտի գղջայ իր անգթութեանը համար :
Իմ տուած պզտիկ գիրքս անասուններուն ե-
ղած անգթութեանը վրայօք էր : Թէ որ ին-
քը կարդայ անիկայ , ինչպէս որ կը յուսամ
թէ պիտի ընէ , անկէց կրնայ աւելի սորվել
ուրիշ ժամանակ կենդանիներու հետ ինտոր

վարուելիքը : Ան գիրքը պիտի սորվեցունէ ա-
նոր թէ երբ որ մէկը անգթութիւն կ'ընէ ա-
մենէն նուաստ արարածներուն , սուրբ և մեծ
Աստուծոյն որչափ անհաճոյ է , և անանկնե-
րուն իր ցուցուցած համբերութիւնը որչափ
զարմանալի է : Աղէկ չէ՞ որ ան անգութ տղան
սորվի ասիկայ , և զգաստանայ :

Այո՛ հայր , պատասխանեցին երկուքն ալ :

Ուրեմն չեխելէն կամ ծեծելէն աղէկ չէ՞ր ան :

Ո՛հ՛ շատ աւելի աղէկ :

Հիմա գրեթէ տանը մօտեցանք , բայց մէկ
մեծ ճշմարտութիւն մ'ալ կայ՝ որ կ'ուզեմ աս
գիշեր պառկելնէդ առաջ սորվիք :

Աստուած շատ ողորմած է մեզի : Մենք իր
տուած բաներուն մէկնուն արժանի չենք : Մենք
ամէն օր զինքը բարկացընող այնքան մեղքեր
կը գործենք՝ որ եթէ ինքը բարերար և ներող
չըլար , մենք բոլոր մեր զուարճութիւնները
կը կորսընցընէինք , և տրտմութենէ և ցաւէ
զատ ուրիշ բան չպիտի մնար մեզի աս աշխար-
հիս մէջ : Բայց ինքը կ'ողորմի մեզի . և անանկ
կը սորվեցունէ մեզի որ չարութիւն ընողնե-
րուն ողորմինք : Աստուածաշունչը մեզի կը
սորվեցունէ ողորմած ըլլալ , ինչու որ մեր
Երկնաւոր Հայրը ողորմած է :

Ս ՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Հայր , Յովսեփին վրայօք Սուրբ Գիրքէն
կը կարդան մեզի աս առտու :

Մարիամ իր հօրմէն անհկայ խնդրեց մէկ
առտու մը երբ որ հայրը Աստուածաշունչը
ձեռքն առաւ :

Այո , ըսաւ հայրը , թէ որ խելօք նստիք ,
Յովսեփին պատմութեանը մէկ մասը կը կար-
դամ , և անանկ ալ ըրաւ :

Հետեւեալ օրը նախաճաշիկի ժամանակ Յա-
կոբ իր հօրը ըսաւ . եթէ կը կամիս Յովսե-
փին վրայօք կրկին կարդան աս առտու . և
հայրը Յովսեփին պատմութեանը ուրիշ մէկ
մասը կարդաց , և ամէն առտու մէյմէկ կտոր
բան կարդաց , մինչև որ լմնցուց :

Տղաքները կը սիրէին Յովսեփին պատմու-
թիւնը լսել : Անոնք շատ անգամ լսած էին
անհկայ մօրերնուն բերնէն՝ որ թէ կարդացած էր
զանհկայ , և թէ անոր վրայօք ալ խօսած էր
անոնց , և հիմա ալ կ'ուզէին որ հայրերնին
կարդար զանհկայ :

Բոլորը ճշմարիտ է , անանկ չէ , հայր ,
հարցուց Մարիամ :

Այն , յերաւի բոլորը ճշմարիտ է , ըսաւ
ինքը :

Ամէն մէկ բառն ալ , հարցուց Յակոբ :

Այն , ամէն մէկ բառն ալ • ինչու որ
Աստուածաշունչը ճշմարտութեան խօսքն է • և
անոր մէջ ամէն մէկ բան որ իբրև ճշմարտու-
թիւն գրուած է , ճշմարիտ է :

Աստուած շինեց Սուրբ Գիրքը :

Սուրբ Գիրքին մէջ ամէն գրուած բառե-
րը Աստուած գրել տուաւ : Մարիամ • միտքդ
չէ որ մօրդ դուրսն եղած ժամանակը ջանք
ըրիր նամակ մը գրել իրեն :

Այն , ըսաւ Մարիամ , բայց չկրցայ գրել ,
մինչև որ դուն իմ ձեռքս չբռնեցիր :

Այն , անանկ ըրի • գրիչը քու ձեռքիդ
մէջ դրի , և քու ձեռքդ իմինիս մէջ բռնե-
ցի ու շարժեցի • և անանկով մօրդ խրկուած
նամակը գրուեցաւ • և ան ալ կրցաւ կար-
դալ զանիկայ , և ըսաւ թէ անիկայ իմ գը-
րածս էր և չէ թէ քուկդ :

Անանկ եղաւ , ըսաւ Մարիամ • ինչու որ
դուն քու ուզածիդ պէս գրեցիր : Աս գրիչը
բռնելէն զատ ուրիշ բան մը չըրի , և այնքան
ալ չէի կրնար ընել , թէ որ դուն ինձի չօգ-
նէիր :

Հատ աղէկ • ուրեմն Աստուած ալ սուրբ

Մարդիկներուն իր ուզածը գրել տուաւ : Իր
 Սուրբ Հոգիովը ինքը անոնց միտքերնուն մէջ
 բառեր դրաւ , և անոնք ալ իր ուզածներէն
 զատ ուրիշ բաներ չէին կրնար գրել , ինչպէս
 որ դուն մօրդ նամակ մը չէիր կրնար գրել՝
 առանց օգնութեան : Ուստի Սուրբ Գիրքը
 թէ և մարդոց ձեռքով գրուած է՝ բայց Աս-
 տուծոյ Իօսօքը կը կոչուի :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է

Բ Ո Լ Ո Ր Մ Ա Ր Դ Ի Կ Մ Ե Ղ Ա Ն Չ Ե Լ Ո Ւ

Պ Ա Տ Ր Ա Ս Տ Մ Ր Տ Ո Վ Ժ Ն Ս Ժ Ե Ն

Հայր , Յովսեփին եղբայրները անոր ասանկ
 չարութիւն մը ընելովնին շատ գէշ կ'երևնան ,
 անանկ չէ՞ , Հարցուց Մարիամ :

Այո՛ , պատասխանեց Հայրը , գէշ ըրին ,
 և անոր համար Աստուած բարկացաւ անոնց :
 Գիտէ՞ք թէ անոնց չարութիւն ու անգթու-
 թիւն ընելու պատճառը ի՞նչ էր :

Յովսեփին հօրը անիկայ իրենցմէ աւելի սի-
 բեղուն համար էր , անանկ չէ՞ , Հարցուց
 Յակոբ :

Ան պատճառով էր որ անոնք նախ և առաջ սկսեցին զանի ատել , բայց ասիկայ անոնց չարութեանը բուն պատճառը չէր : Աս ձեզի ըսեմ բուն պատճառը ինչ ըլլալը :

Յովսեփին եղբայրները չար սիրտեր ունէին : Անոնք զԱստուած չէին սիրեր , և հոգ չէին ընել անոր պատուիրածները կատարելու : Ասխանձով՝ ատելութեամբ և ամէն տեսակ չար զգացումներով անոնց միտքերը լեցուն էին • և Աստուծոյ աղօթք չէին ընել որ աս չար զգացումները իրենցմէ վերցունէ , և անոնց տեղը բարի զգացումներ տայ : Աւրեմն երբ որ անոնք տեսան թէ հայրերնին Յովսեփը իրենցմէ աւելի կը սիրեր , անոնք մէկէն սկսան զինքը ատել : Իրենց միտքերուն մէջ բարի բան մը չկար որ զանոնք չար զգացումներէ և գործերէ արգիլէ :

Մէկ ուրիշ մեծ ճշմարտութիւն մ'ալ ըսեմ ձեզի : Յովսեփին եղբայրներուն սիրտերը ուրիշ մարդոց սիրտերէն չար չէին , ինչու որ բոլոր մարդիկ չար սիրտերով աշխարհ եկած են : Բոլոր աս աշխարհիս մէջ եղած չար գործքերը անոր համար կ'ըլլան , ինչու որ բոլոր աս աշխարհիս մէջ բնակող մարդիկները մեզք գործելու պատրաստ սիրտերով ծնած են : Իմ սիրելի պզտիկ տղաքներս , ասանկ սիրտե-

ըով ճնած են : Ի ուք ալ երբեմն չարութիւն
կ'ընէք . անանկ չէ՞ , Մարիամ :

Ե. յո՛ , հայր , երբեմն կ'ընենք , ըսաւ պըզ-
տիկ աղջիկը քիթին տակէն :

Ի այց թէ որ ձեր սիրտերը չար չըլլային ,
դուք բնաւ չար բան մը չպիտի ընէիք , և ա-
նանկ բան մը ընելու փափաք չպիտի ունե-
նայիք , որուն գէշ ըլլալը գիտէք : Միշտ պի-
տի սիրէիք աղէկ բաները ընել :

Արբ ը մենք ուրիշները կը մեղադրենք ա-
նոնց չար գործերուն համար , մոռնալու չենք
թէ մենք ալ շատ անգամ մեղք կը գործենք ,
և անոնց պէս մենք ալ մեղանչելու պատրաստ
սիրտերով ճնած ենք :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ը

Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ

Մ Ա Ր Ի Ը Ս Ո Ւ Ր Բ Ս Տ Ե Ղ Ճ Ե Յ

Մէկ ուրիշ ճշմարտութիւն մ'ալ ըսեմ
ձեզի , թէ որ դուք իմ ըսածներէս չձանձ-
րանաք , ըսաւ հայրերնին : Միտքերնիդ կու
գայ՞ արդեօք ան ամէն բաները ստեղծող մեծ

Աստուծոյն վրայօք իմ մէկ քանի օր առաջ
ըսածս :

Այո՛ , պատասխանեց Մարիամ • դուն ը-
սիր թէ աշխարհը և ամէն տեսնուած բաները
ինքը ստեղծեց :

Ահապէ • ամէն կենդանի արարածները ,
հրեշտակները , մարդիկները և ամէն տեսակ
անասունները ինքը ստեղծեց : Աստուծոյ վը-
րայօք ուրիշ ըսածներէս բան մը կը յիշէ՞ք ,
կրկին հարցուց հայրը :

Դուն ըսիր թէ՛ ինքը շատ բարերար է մե-
զի , ըսաւ տղան :

Այո՛ , շատ բարերար է • և միանգամայն
շատ ալ սուրբ : Ար կարծէ՞ք թէ սուրբ
Աստուած մը՝ մարդոց սիրտերուն պէս չար
սիրտ ունեցող արարած մը պիտի ստեղծէր ա-
նանկ չար սրտով , որ անոնք զուարճանան Աս-
տուծոյ արգիլած բաները ընելով :

Ես չեմ կարծիր , ըսաւ Մարիամ • բայց
բանը ի՞նչպէս եղաւ հայր :

Մտիկ ըրէ որ պատմեմ , պատասխանեց
հայրը • Աստուած մարդը սուրբ ստեղծեց :
Առջի բերանը մարդուն վրայ մեղք չկար : Ա-
նոր խորհուրդները և ճամբաները բոլորն ալ
բարի էին : Ան ատենը մարդը զԱստուած կը
սիրէր , և ամէն բանի մէջ ջանք կ'ընէր Աս-

տուճոյ հաճոյ ըլլալու : Ըն ատենը աշխարհիս
 մէջ ոչ տրտմութիւն կար , ոչ լաց և ոչ ալ
 ցաւ . ինչու որ ամէն բան Աստուծոյ պէս
 սուրբ էր , և մեղք չեղած տեղը տրտմութիւն
 ալ չկայ : Բայց դժբաղդաբար օր մը մարդը
 անձնազանդ եղաւ աս բարերար և սուրբ Աս-
 տուծոյն : Ըն ատենը մարդուն սիրտը բարիէն
 չարի փոխուեցաւ . սուրբ ըլլալուն տեղը չար
 եղաւ . և ասիկայ մարդուն յանցանքովը ե-
 դաւ՝ և չէ թէ Աստուած անիկայ այնպէս
 ստեղծեց : Թէ և մարդը փոխուեցաւ , բայց
 Աստուած չփոխուեցաւ : Ինքը տակաւին բա-
 րերար և սուրբ էր : Ուրիշ ժամանակ ձեզի
 կ'ըսեմ թէ ինչ կերպով Աստուած բարերար
 էր երբ որ մարդուն սիրտը չարացաւ :

Գ Լ Ո Ի Խ Ժ Գ

Գ Զ Տ Ի Կ Մ Ե Ղ Ք Զ Կ Ա Յ

Նոյն օրը իրիկուան ատենը , երբ որ Մա-
 ըիամ իր հօրը սենեակը մտաւ անոր Գիշեր
 բարի զրուցելու , ըսաւ . հայր , ես բան մը
 գիտեմ :

Իրաւ , ինչ բան գիտես , նայինք , պա-
 տասխանեց հայրը :

Ես գիտեմ քու աս առտուան խօսածդ որ
մարդուն վրայով ըլլալը . Ադամն էր ան :

Շիտակ է , Ադամ էր անոր անունը : Ին-
քը Աստուծոյ առաջին ստեղծած մարդն էր ,
ու Եւայ ալ առաջին կինը : Անոնք Աստու-
ծոյ արգիլածը ըրին , և ալ սուրբ չմնացին , և
անոնց զաւակները սուրբ սիրտերով չծնան :
Մենք Ադամին ու Եւային զաւկրներն ենք ,
և բոլոր աս աշխարհիս մէջ եղած մարդիկը
անոնց զաւկրներն են . և մենք ամէնքս ալ
չար սիրտ ունեցող զաւկրներ ենք :

Բայց կրնա՞ք ըսել ինձի թէ ի՞նչ էր ան
Աստուծոյ արգիլած բանը որ Ադամ ու Եւայ
ըրին :

Այո՛ , ես կրնամ ըսել , ըսաւ Յակոբ . ա-
նոնք պտուղ առին մէկ ծառէ մը՝ որուն հա-
մար Աստուած հրաման ըրեր էր որ չդպչին :

Ուրախ եմ որ իմ ըսածներս միտքերնիդ
կը պահէք . և հիմա կ'ուզեմ որ ջանք ընէք
աս ալ միտքերնիդ պահելու թէ՛ պզտիկ մեղք
չկայ : Գուցէ մեր նախածնողները կը խոր-
հէին թէ արգիլուած ծառէ մը քիչ մը պը-
տուղ առնելը , շատ պզտիկ յանցանք մըն էր .
բայց անանկ չէ . անիկայ մեծ յանցանք մըն
էր , ինչու որ Աստուծոյ՝ իրենց ստեղծողին
դէմ անձնազանգուածիւն մըն էր :

Իմ սիրելի տղաքներս՝ ասոր վրայ մտմտա-
ցէք ամէն օր, քանի որ կ'ապրիք, և բնաւ
չար բան մը մի՛ ընէք՝ անիկայ պղտիկ չարու-
թիւն մը սեպելով. հապա միտքերնիդ պա-
հեցէք թէ արգիլուած ո՞ր և իցէ մէկ բանը ը-
նելը մեծ մեղք մըն է. Գիշեր բարի:

Գ Լ Ո Ւ Ի Ի Ի

Գ Ե Ր Ե Զ Մ Ա Ն Ա Տ Ո Ւ Ն Ը

Մարիամին ու Յակոբին տանը մօտ Ակե-
ղեցի մը կար, և անոր մօտ ալ գերեզմանա-
տուն մը: Գերեզմանատանը դռները կղպուած
չէին, և անոր մէջէն քալելու լայն ճամբայ մը
կար, որ դէպ ՚ի միւս կողմը եղած գեղեցիկ
արտերը կը հանէր: Անոնք շատ անգամ գե-
րեզմանատունէն արտերը կ'երթային, երբեմն
ալ հօրերնուն հետ մէկտեղ:

Անոնց տանը պատուհաններէն գերեզմանա-
տունը կը տեսնուէր. և շատ անգամ անանկ
կը պատահէր որ՝ երբոր մեռել մը թաղուե-
լու համար հոն բերուելու ըլլար, անոնք ե-
ղածը կը տեսնային:

Թէ և անոնք պղտիկ էին, բայց հօղը

դրուած սնտուկին մէջ եղածը գիտէին . ինչու որ անոնք իրենցմէ պզտիկ եղբայր մը ունէին մեռած , որ սնտուկը դրուեր ու թաղուեր էր :

Խեղճ տղաքներ . անոնք շատ լացին երբ իրենց սիրելի պզտիկ եղբայրը կորսընցուցին . և խորհուրդն անգամ անտանելի էր իրենց թէ անոր մեռեալ մարմինը հողը պիտի դրուէր , որ բնաւ կրկին չպիտի կրնային տեսնել :

Իրենց ծնողքները ջանացին զանոնք միսթարել ըսելով թէ իրենց պզտիկ եղբօրը հոգին երկինքը գնաց , հոն աւելի երջանիկ ըլլալու՝ քան թէ աս աշխարհիս մէջ : Անոնց նաև ըսուեցաւ որ եթէ իրենք սուրբ տղաքներ ըլլան և Աստուծոյ նազանդին և Տէր Յիսուս Քրիստոսը սիրեն , իրենց եղբայրը պիտի տեսնան երկինքը , և անոր հետ երջանիկ պիտի ըլլան յաւիտեան :

Աղբօրնուն մեռած ժամանակը անոնք պըզտիկ էին , և աղէկ չէին կրնար ամէն իրենց զրուցուածները հասկընալ , բայց կը հաւատային անոնց : Ան ատենը շատ անգամ կը խօսէին մեռած պզտիկ Յովհաննէսին վրայօք և կը զարմանային թէ արդեօք ի՞նչ կ'ընէր ան երկինքը : Արբօր գերեզմանատունէն կ'անցնէին , անոնք շատ անգամ եղբօրնուն գերեզ-

մանին քովը կը կայնէին և անոր վրայօք կը
խօսէին :

Արբոր հօրերնուն տունը հիւր մը գալու
ըլար , կ'ուզէին գերեզմանատունը տանիլ զա-
նոնք , և իրենց սիրելի պզտիկ Յովհաննէս եղ-
բօրը թաղուած տեղը ցուցունել անոնց : Բայց
անոնք բնաւ աս խօսքը չէին մոռնար ըսելու
թէ « Յովհաննէսը երկինքն է հիմա , և թէ
որ մենք ալ բարի ըլլանք և Տէր Յիսուս
Քրիստոսը սիրենք , մենք ալ հոն պիտի եր-
թանք երբոր մեռնինք : Ըն ատենը կրկին Յով-
հաննէսը պիտի տեսնենք և բնաւ մէյմ'ալ
չպիտի կորսընցունենք զինքը , և հայրերնիս ու
մայրերնիս ալ հոն պիտի ըլլան , և մենք ալ
ան ատենը շատ երջանիկ պիտի ըլլանք » :

Ըսոնք էին ան պզտիկ տղոցը խորհուրդները :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

Մ Ե Ղ Ք Ը Պ Է Տ Ք Է Ո Ր Պ Ա Տ Ժ Ո Ւ Ի

Ադամին ու Եւային վրայօք խօսելէն օր մը
ետեւ , Մարիամ ու Յակոբ հօրերնուն հետ
գերեզմանատուն գացին պտըտելու , և սիրելի
Յովհաննէսին գերեզմանին քովը կայնեցան , և

հայրերնին ըսաւ անոնց • Քիտէք , ինչու համար ձեր եղբօրը մարմինը հողը դրուեցաւ :

Եւ յո՛ , պատասխանեց պզտիկ աղջիկը , արցունք թափելով • ինչու որ առանց արցունքի Յովհաննէսին վրայօք չէր կրնար խորհիլ • Եւ յո՛ , դերեզմանը դրուեցաւ մեռնելուն համար :

Բայց ինչո՞ւ մեռաւ , կրկին հարցուց հայրը :

Հիւանդ ըլլալուն համար • անանկ չէ՞ հայր :

Եւ յո՛ , ըսաւ հայրը • շատ սաստիկ էր իր հիւանդութիւնը , և սիրելի պզտիկ տղան շատ ցաւ քաշեց : Բայց ուրիշ բան մը պիտի հարցունեմ ձեզի : Ինչո՞ւ համար քու սիրելի Յովհաննէս եղբայրդ անանկ սաստիկ հիւանդութիւն և այնչափ ցաւ քաշելու էր :

Մարիամ ու Յակոբ երկուքն ալ շփոթեցան :

Ուրեմն ես ըսեմ ձեզի , ըսաւ հայրը : Թէ որ աս աշխարհիս մէջ մեղք չըլլար , ոչ ցաւ ոչ հիւանդութիւն և ոչ ալ մահ պիտի ըլլար : Բայց Եստուծոյ օրէնքը և կամքը ան է որ մեղքը պատժուի , և մեղքին պատիժներէն մէկը մահն է : Քու սիրելի պզտիկ Յովհաննէս եղբայրդ մեռաւ՝ ինքը մեղաւոր ծնողքներէ ծնած ըլլալուն , և մեղսալից բնութիւն ունենալուն համար : Եւ մենուն մահուանը բուն պատճառը աս է • և ասիկայ ամէն օր կը ցուցունէ մեզի թէ Եստուած մեղքին կը բար-

կանայ , և պիտի պատժէ անիկայ : Եսիկայ
մէկ կերպն է , որով սուրբ և արդար Եստուա-
ծը պիտի պատժէ մեղքը : Աշխարհիս մէջ կը-
րած բոլոր տրտմութիւններնիս մեր վրայ կու-
գան մեր մեղանշական բնութեանը համար :

Բայց ամենէն գէշը աս չէ : Մարմինը մեռ-
նելէն ետեւ՝ անմահ հոգին ալ կրնայ պատ-
ժուիլ , և Եստուած ինքը Սուրբ Գիրքին
մէջ կ'ըսէ մեզի թէ՛ ամէն մեղք գործող հո-
գիները պիտի պատժուին : Անոնք երկինքը
չեն կրնար երթալ որ երջանիկ ըլլան . հապա
դժոխքը պիտի բանտարկուին ուր որ ամէն բան
թշուառութիւն և ցաւ է :

Գ Լ Ո Ւ Ի Ի Ի Բ .

Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ե Ն

Ա Մ Ե Ն Ե Ն Լ Ա Ի Ը

Խեղճ Մարիամ , ինքը շատ արցունք թա-
փեց , և շատ տրտմութիւն զգաց մեղքի պա-
տիժին վրայօք իր հօրը խօսած ատենը :

Հայրը տեսաւ անիկայ . և չէր ուզեր ան
տրտում մնայ , ուստի ըսաւ . Սա գերեզ-

մանատունէն ելլենք և քիչ մը արտերը պտը-
տինք , և ան ատենը բան մը ըսեմ քեզի ու
Յակոբին որ մխիթարուիք : Ճշմարտութիւն-
ներէն ամենէն լաւը ձեզի ըսեմ պիտի :

Ըն ատենը անոնք արտերը գացին . և քա-
նի որ կ'երթային՝ Մարիամին արցունքը կըտ-
րեցաւ : Գուցէ ինքը գիտէր իր հօրը զրու-
ցելիք ան մեծ և ուրախառիթ ճշմարտութիւ-
նը , ինչու որ տարակոյս չկայ որ ինքը շատ ան-
գամ լսած էր անիկայ . բայց անանկ ճշմար-
տութիւններ կան՝ որ անոնց վրայ որչափ որ
խօսինք կամ խորհինք , քիչ է :

Ձեզի բան մը կ'ուզեմ հարցունել , շատ
անգամ իմ և սիրելի մօրերնուդ և ուրիշնե-
րուն Տէր Յիսուսի Քրիստոսի վրայօք խօսիլը
և կարդալը լսեր էք , անանկ չէ՞ :

Ե,յո՛ , հայր , ըսաւ Մարիամ . շատ անգամ :
Ուրեմն կրնա՞ն ըսել ինձի Տէր Յիսուսի
Քրիստոսի ո՛վ ըլլալը :

Ե,յո՛ , ինքը Եստուծոյ Արդին է :

Ուստի սիրելի պզտիկ աղջիկս , մարդոց գիտ-
ցած ճշմարտութիւններուն ամենէն լաւը աս է
թէ Տէր Յիսուս Քրիստոս Եստուծոյ Արդին
աշխարհ եկաւ մեզի պէս մեղաւորները դժոխք
երթալէ ազատելու :

Հիմա մտիկ ըրէք որ պիտի ջանամ աս մեծ

ճշմարտութիւնը պարզապէս ձեզի հասկը-
ցընել :

Աստուած ըսած է որ եթէ իմ ստեղծած
մարդիկներս ինձի դէմ մեղանչեն , պիտի պատ-
ժուին : Անոնք տրտմութիւն պիտի ունենան
աս աշխարհիս մէջ , իրենց մարմինները պիտի
մեռնին , և իրենց հոգիները իմ սուրբ երկին-
քէս պիտի աքսորուին :

Մեր նախածնողքները Ադամ ու Եւայ Աս-
տուծոյ ըսածը գիտէին , բայց անոր դէմ մե-
ղանչեցին : Ան ատենը Աստուած ըսաւ . Իմ
խօսքս կոտրել չըլլար , մարդը պատժուելու
է : Ամէն մեղք գործողը պատիժ պիտի կրէ ,
և անոնց մարմինները պիտի մեռնին . բայց ա-
նոնց հոգիները դժոխք երթալէն պիտի ազա-
տեմ : Անոնց տեղը պատիժ կրող մը գտայ :
Իմ սիրելի Արդիս աշխարհ պիտի երթայ , և
հոն մարդու մը պէս պիտի ապրի : Ինքը մեղ-
քի պատիժը պիտի կրէ : Իր հոգին տրտմու-
թիւն պիտի քաշէ , և իր մարմինը պիտի մեռ-
նի . և աս կերպով իմ խօսքս աւրուած չպի-
տի ըլլայ : Աս արդար Աստուած մը պիտի
ըլլամ , ու միանգամայն մարդոց փրկւելուն
ճարը պիտի գտնամ . ինչու որ ո՛վ որ իմ սի-
րելի Արդիս կը սիրէ և անոր կը հաւատայ ,
պիտի փրկուի : Աս անոնց նոր սիրտեր և ու-

զևղ հոգիներ պիտի տամ , և պիտի յարմար-
ցնեմ անոնք երկինքը գալու և հոն բնակե-
լու յաւիտեան :

Ուստի Տէր Յիսուս Քրիստոս աշխարհ ե-
կաւ , մարդու մը պէս ապրեցաւ , խաչին վրայ
մեռաւ , յարութիւն առաւ և երկինքը գնաց
զինքը սիրողներուն և իրեն ծառայողներուն
տեղ պատրաստելու :

Թէ որ մենք զինքը սիրենք և իրեն ծա-
ռայենք , ինքը մեզի համար տեղ մը պիտի
պատրաստէ երկինքը :

Մեծ ճշմարտութիւններուն ամենէն լաւը
աս է՞ :

Գ Լ Ո Ի Խ Ի Գ

Փ Ո Ի Շ Ե Պ Ս Ա Կ Ը

Մարիամին և Յակոբին հայրը ան ժամա-
նակը Աստուծոյ սիրուն վրայ ս'լ ուրիշ բան
մը չըսաւ : Ինքը գիտէր թէ պզտիկ տղաքնե-
րը կը ձանձրանան մէկ բանի մը վրայօք մէկէն
'ի մէկ շատ լսելէն , և ինքը բնաւ չէր ուզեր
անոնց միտքերը ձանձրացընել • ուստի սկսաւ
ուրիշ բաներու վրայ խօսիլ :

Արտերուն մէկուն մէջ պղտիկ լիճ մը կար ,
որուն եզերքը երկայն կնիւն (աալ) բուսեր էր :
Ասոնցմէ ինքը մէկ քանի հատ փրցուց , և ը-
սաւ թէ իմ տղայութեանս ժամանակը շատ
կը զուարճանայի կնիւները հիւսելով պղտիկ
կողովներ շինելու :

Սիրելի քոյր մը ունէի , ըսաւ , որուն հետ
մէկտեղ շատ անգամ արտերը կ'երթայինք և
ասոնց պէս կնիւներ կը ժողվէինք , Ար յի-
շեմ թէ անգամ մը գլխարկ (շափկա) շինեցինք
իր պաճուճապատանքին (պէպէ+) համար :

Իրաւ , հայր , ըսաւ Յակոբը , անիկայ շատ
աղւոր կ'ըլլայ :

Ես ալ կ'ուզեմ անանկ գլխարկ մը ունենալ
իմ պաճուճապատանքիս համար , ըսաւ Մա-
րիամ , եթէ կամիս ինձի համար մէկ հատ
մը շինէ :

Հոս չեմ կրնար շինել , ըսաւ հայրը , ին-
չու որ ասեղ և դերձան պէտք է : Բայց բան
մը կրնանք ընել : Ասոնցմէ կրնամ խել մը
հիմա հիւսել որ տուն տանիք , և յետոյ
մօրերնէդ խնդրէք որ մէկտեղ կարէ զանոնք :

Աստի անոնք նստան , ու Մարիամ հօրը
հիւսած ժամանակը կը նայէր :

Երբոր հայրը բաւական հիւսեց , անոնցմէ
պղտիկ պսակ մը շինեց ու Մարիամին գլու-

Խը դրաւ • ինչու որ գլխարկը հանած էր :
 Ասոր Մարիամ այնչափ հաւնեցաւ որ կ'ուզէր
 գլուխը դրած մինչև տուն երթայ , և հայրն
 ալ անոր գլխարկը իր ձեռքը տանի : Բայց
 հայրը՝ չէ , ըսաւ • աւելի աղէկ է որ գլխարկդ
 հագնիս , և ես ալ պսակը տանիմ թէ որ
 կ'ուզես • և անանկ ալ ըրին : Մարիամ գի-
 տէր թէ միշտ իր հօրը ուզածը ընելը աղէկ էր :

Անոնց եղած տեղին մօտերը տեսակ մը մո-
 ընի կը բուսնէր երկայն ճիւղերով ու փուշե-
 ըով լեցուն՝ որ ճամբուն վրայ կախուած էր :
 Մարիամին շրջազգեստը (Ֆիսպան) ասոնցմէ
 մէկէն բռնուեցաւ , և պէտք եղաւ որ հայրը
 անկէց ազատէ անիկայ :

Ասոր պէս փշալից ճիւղէ շինուած պսակի
 մը ինչպէս պիտի հաւնիս , հարցուց հայրը ,
 երբոր Մարիամին առջևէն ճամբու վրայի ճիւ-
 ղը մէկդի առաւ :

Ամենևին չպիտի հաւնիմ , հայր • ան զիս
 պիտի ճանկրուտէ , մնասէ և ինէ արիւն
 հանէ :

Կարծեմ թէ անանկ պիտի ըլլայ , ըսաւ
 հայրը • ես բնաւ չեմ ուզեր քեզ մնասել ,
 և աւելի աղէկ կը սեպեմ ինքզինքս մնասել՝
 քան թէ քեզ : Գիտնո՞ս անգամ մը որո՞ւն
 գլուխը փուշէ պսակ մը դրին :

Յիսուսին , ըսաւ պզտիկ աղջիկը : Ես խօս-
քը ընելով՝ տուներնին հասան :

Գ Լ Ո Ւ Ի Ի Ի Դ

Պ Զ Տ Ի Կ Տ Ղ Ա Ք Ն Ե Ր Ո Ւ Ն

Հ Ի Ա Մ Ա Ն Կ Ա Յ Ք Ի Ի Ս Տ Ո Ս Ի Ե Ր Թ Ա Լ Ո Ւ Ի

Մարիամ և Յակոբ միշտ կ'ուզէին պառ-
կելէն առաջ հօրերնուն սենեակը երթալ ու
Գիշեր բարի ըսել . և թէ որ ինքը շատ գործ
չունենար , զանոնք քովը կ'առնէր քիչ մը
ատեն , և խել մը բան անոնց հետ կը խօսէր :

Ես յիշուած խօսակցութեան գիշերը երբոր
անոնք իր քովը նստեր էին , հարցուց թէ կը
յիշէ՞ք գերեզմանատունին և արտերուն մէջ
ըբա՞ծ խօսակցութիւննիս ի՞նչ բանի վրայօք էր :

Յակոբ ըսաւ թէ՝ Տէր Յիսուս Քրիստոսի
վրայօք էր :

Ենանկ էր , պատասխանեց հայրը . և կրնա՞ք
ըսել ինձի թէ Տէր Յիսուս ո՞ւր է հիմա :

Երկինքն է , ըսաւ պզտիկ աղջիկը :

Ուրիշ տեղ չէ՞ , հարցուց հայրը :

Մարիամ ըսաւ , չեմ գիտեր :

Անիկայ երկրիս վրայ ալ է, ըսաւ հայրը :
 Ինքը Աստուած է՝ ինչպէս որ նաև մարդ . ու
 ըովհետև Ինքը և հայրը ու Սուրբ Հոգին
 մէկ Աստուած մըն է : Ասանկ ըլլալով՝ ինքը
 կարող է մեղաւորները փրկել, և բոլոր իրեն
 գացողները օրհնել :

Իայց կ'երևայ թէ դուք չէք գիտեր իրեն
 գացող ըսելն ինչ ըլլալը : Ինք աղօթք մը
 ընել սորված էք . երբեմն քովս ծունկ կը չո-
 քէք, ու աղօթք կ'ընէք . և նոյն բանը աս
 իրիկուն կրնաք ընել, և կը յուսամ թէ ա-
 ղօթքնուդ մէջ ըսելիքնուդ վրայ պիտի խորհիք :

Ան ատենը տղաքները ծունկ չոքեցին հօրեր-
 նուն քովը, և մէկ քանի պարզ խօսքերով
 աղօթք մը ըրին՝ ինչպէս որ սորված էին : Ապր-
 ծեմ թէ հայրերնին ալ աղօթք ըրաւ անոնց
 ծունկի վրայ եղած ժամանակը :

Աղօթքը լմնցունելնէն ետև հայրերնին ըսաւ .
 իմ սիրելի տղաքս, թէ որ սրտանց աղօթք ը-
 րիք, Յիսուս Քրիստոսի գացող եղաք : Ա-
 մէն ո՛վ որ անկեղծութեամբ իրեն աղօթք կ'ը-
 նէ, և կը հաւատայ թէ ինքը կարող է ա-
 նոնց ներել և զանոնք օրհնել, իրեն գացած
 կ'ըլլայ . և ինքը ըսած է թէ իրեն գացողնե-
 րէն մէկը չպիտի վռընտէ :

Մէկ ուրիշ մեծ ճշմարտութիւն մ'ալ պի-

տի ըսեմ ձեզի, որ սիրտերնիդ ուրախացունէ
 անոր վրայօք խորհած ատեննիդ. այսինքն թէ՛
 պղտիկ տղաքներուն հրաման կայ Քրիստոսի
 երթալու: Ինքը՝ թող գան ըսած է: Ժա-
 մանակաւ երբոր ինքը երկրիս վրայ էր, ծը-
 նողքներ իրենց տղաքները անոր բերին որ ա-
 նոնց վրայ ձեռք դնէ և օրհնէ զանոնք: Քո-
 վը կայնողներէն մէկ քանի չափահաս մարդիկ
 ըսին. մէկդի՛ առէք ատ տղաքները: Բայց
 Աստուծոյ բարերար և հեզ Արդին ըսաւ.
 «Թող տուէք ատ մանր տղոցը, և մի՛ արգի-
 լէք ասոնք ինձի գալէն. ինչու որ երկնից թա-
 գաւորութիւնը ատանկներունն է»:

Գ Լ Ո Ւ Ի Ի Ի Ե

Ծ Ն Ո Ւ Ն Դ Ի Ի Ն Տ Ա Ր Ե Դ Ա Ր Ձ Ը

Մէկ առտու մը Մարիամին ու Յակոբին
 հօրը սենեակին դուռը կը չալուէր: Բայց
 ձայնը քիչ ըլլալուն համար՝ ինքը վստահ չէր
 թէ իրօք դուռը կը չալուի թէ չէ. ուստի
 բան մը չըսելով ականջ դրաւ: Յետոյ մէյ
 մըն ալ քիչ մը ամուր ձայն մը լսեց, և ան
 ատենը հրամեցէք ըսաւ:

Դուռը բացուեցաւ , և պղտիկ աղջիկն
 տւ տղան մտան : Ա՛վ հայր , ըսին անոնք ,
 մենք հիմա սորվեցանք քու դուռդ բանալ .
 ուստի երբոր կրկին չալենք , պէտք է որ դուն
 քու տեղէդ ելլես :

Ես կը տեսնամ որ դուք կրնաք դուռս բա-
 նալ . , ըսաւ հայրերնին . բայց ձեռքինդ ի՛նչ
 է Յակոբ :

Ա՛հ չե՞մ գիտեր , այսօր չորս տարիս լը-
 մընցուցի և հինգս մտայ , և ասիկայ իմ ծը-
 նունդիս տարեդարձին շօթն է որ քեզի հա-
 մար բերի :

Են շօթը շատ աղւոր էր , ինչու որ Յա-
 կոբին մայրը շիներ էր անիկայ : Հայրը կե-
 րած ժամանակը ըսաւ , շատ աղւոր է . ասոր
 վրայ պղտիկ տղան ուրախացաւ . մեծ տըրտ-
 մութեան պատճառ պիտի ըլլար իրեն՝ թէ որ
 շօթը շինուելու ժամանակը աւրուէր :

Քու տարեդարձդ մոռցած չէի Յակոբ , ը-
 սաւ հայրը . ծնողքները անանկ օրերը չեն
 մոռնար : Ես չամիչով շօթ մը չունիմ քեզի
 տալու , բայց կարծեմ թէ պղտիկ գիրք մը
 կրնամ գտնալ տարեդարձիդ պարգև մը ընե-
 լու քեզի : Հիմա կրնաս կարդալ քիչ մը ,
 և գուցէ գալ տարեդարձէն առաջ աս գիր-
 քը բոլորովին պիտի լմնցունես , և ան ատե-

Նը աւելի մեծկակ մը կու տամ քեզի :

Յակոբ իր հօրմէն խնդրեց որ իր անունը գրէ գիրքին մէջ , և ըսաւ . այսօր ասկէց քիչ մը կարդամ մօրս :

Յակոբ , ըսաւ հայրը , քիչ մը առաջ զըրուցած խօսքերէս ետեւ մտածեցի թէ ըսածիս վրայօք աղէկ չէի խորհած : Աը յիշե՛ս ի՞նչ ըսի քեզի :

Ըսիր թէ գալ տարեդարձին օրը աւելի մեծկակ գիրք մը պիտի տաս ինձի , հայր :

Ե՛յո՛ , բայց կրնայ ըլլալ որ իմ պզտիկ տղաս չապրի մինչև միւս տարեդարձին օրը :

Յակոբ , կը ջանան աս ճշմարտութիւնը միտքդ պահել՝ թէ չորս տարեկան պզտիկ տղայ մ'ալ կրնայ մեռնիլ :

Թէ որ անանկ ըլլայ՝ երանի թէ երկինքը երթամ , ըսաւ Յակոբ :

Ուստի , սիրելի զաւակս , թէ որ ատանկ փափաք ունիս՝ պէտք է որ հիմա Յիսուսի երթաս , պատասխանեց հայրը :



Փ Ո Թ Ո Ր Ի Կ Ը

Յակոբին ճննդեան տարեդարձէն մէկ քա-
նի օր ետեւ մեծ փոթորիկ մը եղաւ : Անիկայ
գիշերը սկսեց : Մարիամ և Յակոբ չարթըն-
ցան . ինչու որ տղաքները ընդհանրապէս խո-
րունկ կը քնանան . բայց իրենց հայրը և մայ-
րը՝ հովին ու անձրեին և որոտուփին ձայնը
լսեր էին , և փայլակին պայծառ լոյսը տեսեր
էին մէկ քանի ժամ շարունակ :

Արբոր Մարիամ ու Յակոբ անկողինէն ե-
լան առտուանց՝ աս սոսկալի որոտումէն վախ-
ցան , և կը կարծէին թէ այնչափ շատ անձրե-
քնաւ տեսած չէին առաջ : Իրենց պատուհա-
նին դիմացի ճամբան լիճ մը եղեր էր . հովն
ալ շատ սաստիկ էր , և տղաքները կը լսէին
անոր ձայնը ծխնելոյզին մէջէն փչած ժամա-
նակը . իրենց անանկ կու գար թէ տունը կը
շարժի : Արբոր պատրաստուեցան ճնողքներ-
նուն քովը երթալու՝ շատ ուրախ եղան :

Սախաճաշիկի սենեակէն պարտէզը կը տես-
նուէր : Ղիշդ առջի օրը պարտէզին ճամբուն
երկու քովը բարձր կոթերով և գեղեցիկ խո-
շոր գլուխներով շուշաններուն վրայ կ'զմայ-

էին • բայց հիմա տեսան թէ հովէն ծուեր և
անձրեէն ծեծուեր էին , անանկ որ անոնց գե-
ղեցկութիւնը բոլորովին աւրուեր էր : Անոնք
տրտմեցան շուշաններուն ասանկ աւրուելուն
վրայ :

Ինչ անձրերը կու գար և հովը կը փչէր •
ու թէ և փայլակը այնչափ սաստիկ չէր և
որոտումը գիշերուան պէս ահագին ձայն չէր
հաներ , բայց տակաւին Մարիամն ու Յա-
կոբը վախցունելու չափ բան կար : Անոնք
սիրտ չունէին խաղալու :

Ասխաճաշիկի ժամանակը , հայրերնին Աս-
տուծոյ մարդասիրութեանը վրայօք խօսեցաւ
անոնց՝ որ փոթորիկը կը խրկէ օդը մաքրելու
և անիկայ պարզ ու առողջարար ընելու • և իր
ողորմութեանը վրայօք՝ որ զիրենք ապահով
պահեր էր բոլոր գիշեր • և միանգամայն ըսաւ
անոնց թէ Աստուծոյ համար որչափ դիւրին
է անանկ փոթորիկ մը խրկել , որ մէկ ժա-
մուն մէջ ամբողջ երկիր մը կործանէ՝ թէ որ
ուզէ : Ինքը նաև չմոռցաւ իր տղոցը ըսելու թէ
բոլոր Աստուած սիրողները՝ ապահով են ա-
մէն փոթորիկէ , և թէ բան մը չկրնար իրօք
մնասել անոնք • ինչու որ եթէ իրենց Արկ-
նաւոր Հայրը յարմար կը սեպէ թէ անոնք
ապրին , փոթորիկ մը չկրնար դպչիլ անոնց •

և երբոր ինքը աղէկ կը սեպէ թէ մեռնին ,
 թէ փոթորիկով և թէ ուրիշ կերպով , ան
 ատենը իրենց երջանիկ հոգիները իր քո-
 վը կ'առնէ :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ե

Վ Տ Ա Ն Գ Ը Մ Ե Զ Մ Ե Ր

Պ Ա Ր Տ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ե Ն Ե Ն Ե Տ Պ Ա Հ Ե Լ Ո Ւ Զ Ե

Աէս օրուան ատենները փոթորիկը դադրե-
 ցաւ : Հովը կտրեցաւ , և անձրևն ալ չէր
 դար , և որոտում չէր լսուեր , ու փայլակին
 լոյսն ալ չէր տեսնուեր : Ասոնց տեղը՝ արե-
 գակը ամպերուն ետևէն ելլելով , անանկ պայ-
 ծառ կը ցաթէր որ ճամբաները շուտով սկսե-
 ցին չորնալ . և պզտիկ թռչունները՝ որ բո-
 լոր առտուն լռիկ և հանդարտ կեցեր էին ,
 ծառէ ծառ կը թռչտէին և իրենց զուար-
 ճալի երգերովը օդը կը լեցունէին :

Մարիամ ու Յակոբ շատ ուրախացան փո-
 թորիկը անցնելուն համար :

Բայց քանի որ անոնք կ'ուրախանային ,
 ծնողքներնին տխուր լուր մը առին : Մարդ

մը եկաւ անոնց իմացունելու թէ ծովին մօտ
 եղած տուներուն մէջ բնակող խեղճ կնիկնե-
 րը և տղաքները շատ տրտմութեան մէջ էին •
 ինչու որ բոլոր ձկնորսները՝ որոնք իրենց ըն-
 տանիքէն էին, առջի գիշերը նաւակներով ծո-
 վը ելեր էին ձուկ բռնելու, և հիմա նաւակ-
 ներէն միայն մէկը կը տեսնուէր • ուստի կը
 վախնային թէ միւս նաւակները ընկղմած՝ և
 բոլոր խեղճ մարդիկները խղճուած էին • և
 տեսնուած նաւակն անգամ կ'երևար թէ չէր
 կրնար ցամաքը բերուիլ :

Երբոր Մարիամին ու Յակոբին հայրը լսեց
 ասիկայ, ելաւ նաւորդներու հագածին պէտ
 հաստ հանդերձ մը հագաւ : Թէ և ինքը
 հաստատ յոյս մը չունէր որ կարող պիտի ըլ-
 լար անոնց մեծ օգնութիւն մը ընելու, բայց
 ինքզինքը պարտաւոր կը ճանչնար ջանք ընե-
 լու : Արդէն յիշուած է որ ինքը ժամանա-
 կաւ նաւով ճամբորդութիւն ըրած էր • ուս-
 տի գիտէր ծովու վտանգներուն ինչ ըլլալը,
 և կը կարծէր թէ կրնայ գոնէ քիչ մը օգնել
 աս վտանգին մէջ եղող խեղճ մարդիկներուն :

Մարիամ՝ իր հօրը երթալը տեսնելով կու-
 լար : Ար խնդրէր իրմէն որ նաւակով ծովը
 չելէ, որ չըլլայ թէ ինքն ալ խղճուի : Հայ-
 րը իր պզտիկ աղջիկը պագաւ, և ըսաւ թէ

խօսք կու տամ որ ինքզինքիս զգոյշ ըլլամ .
 և պարապ տեղը վտանգին մէջ իմ անձս չճը-
 գեմ : Իայց իմ առտուան ըսածս միտքդ բեր ,
 և ուրիշ մեծ ճշմարտութիւն մ'ալ յիշէ իմ
 սիրելի Մարիամս , թէ մենք պարտաւոր ենք
 կրցածնուս չափ մեր ընկեր մարդոցը օգնել .
 և վտանգը մեզ աս պարտաւորութենէն ետ
 պահելու չէ :

Ըն ատենը հայրը ու մայրը իրարու հետ
 քիչ մը խօսելէն ետքը , հայրը համբուրեց իր
 պզտիկ աղջիկն ու տղան , ու մնաք բարով ը-
 սելով , շուտով դէպ ՚ի ծովը քալեց :

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՄԲ ԴԱՌՆԱԼԸ

Մարիամն ու Յակոբը աս օրէն առաջ ալ
 հայրերնին նաւորդի հագուստով տեսած էին :
 Երբեմն ամառ ժամանակ ինքը իր տղաքները
 և անոնց մայրը նաւակով կ'առնէր և ծովը
 կ'ելէր , որ ատեն ինքը նաւավարի գլխարկ մը
 և բաճկոն մը կը հագնէր . և անոնք կը խըն-
 դային հայրերնին ձկնորսի հագուստով տես-
 նելով : Իայց հիմա չխնդացին : Սիրտերնին

վախով լեցուեցաւ որ ինքը պիտի համարձա-
կէր ան ալէկոծեալ ծովը ելլելու՝ անանկ փո-
թորիկէ մը ետեւ : Մայրերնին շատ ջանք ըրաւ
որ անոնց անհանգստութիւնը փարատէ :

Խել մը ժամանակ տեւց մինչև հայրերնուն
դառնալը : Աէս օրին չեկաւ , և իրիկուան կե-
րակուրի ժամանակն ալ դեռ դուրսն էր :

Թող տուր որ քիչ մ'ալ կենամ , մայր ,
ըսաւ . Մարիամ , երբոր պառկելու ժամանակն
եկաւ . գուցէ հայրս հիմա պիտի գայ :

Յակորն ալ ըսաւ . ես ալ կ'ուզեմ պառ-
կելէս առաջ զինքը տեսնել : Մայրերնին հա-
ճեցաւ անոնց խնդիրքը կատարելու , և անոնք
ալ պատուհանը կայնեցան հօրերնուն դալը
սպասելու :

Ա երջապէս ճիշդ երբոր մայրերնին աս խօս-
քը կ'ըսէր թէ «Ա՛լ հիմա պառկելու էք» ,
մէյ մ'ալ նայիս անոնք պոռացին , ահա՛ կու
գայ , հայրս կու գայ , և սենեակէն ու տու-
նէն դուրս փողոցը վազեցին անիկայ դիմա-
ւորելու :

Այո՛ , իրաւ հայրերնին էր եկողը : Ինքը
զանոնք գիրկը առաւ , և ըսաւ . ինչ է աս , իմ
պզտիկ զաւակներս , տակաւին պառկած չէք :

Չէ՛ , ինչու որ մայրս հրաման տուաւ որ
սպասենք : Բայց ո՛վ հայր՝ քու լաթերդ ո՛ր-

Հափ թաց են , ի՞նչպէս ատանկ եղաւ :

Վաղը կը պատմեմ ձեզի , ըսաւ հայրը ,
հիմա պառկելու էք • բայց շնորհակալ եմ
ձեզի որ զիս միտքէ չհանեցիք դուրսը եղած
ժամանակս :

Ես միջոցիս տուն հասան , և տղաքները ի-
րենց յօժար կամքովը պառկելու գացին : Բայց
երթալէն առաջ չմոռցան հարցունել թէ արդ-
եօք ան խեղճ ձկնորսները ծովը խղդուեցան :

Չէ , չխղդուեցան • ուրախ եմ ըսելու թէ՛
հիմա բոլորն ալ ողջ են , ըսաւ հայրը :

Գ Լ Ո Ւ Խ Ի Յ Ի Յ Ի

Ծ Ո Վ Ե Զ Ե Ր Ք

Հետեւեալ առտուն նախաճաշիկէն ետեւ
հարցուց հայրը իր զակրներուն թէ հետս
պտըտելու երթալ կ'ուզէ՞ք աս առտու :

Ե՛յո՛՛ հս՛յր , պատասխան տուին երկուքն ալ :

Տղաքները ժամանակ չկորսընցունելով իրենց
սենեակը վազեցին , ու շուտով դարձան դուրս
երթալու պատրաստ : Հայրերնին ալ պատ-
րաստ էր , և մէկտեղ ճամբայ ելան :

Ո՛ր պիտի երթանք , հս՛յր , հարցուց
Սարիամ :

Բլուրին գագաթը , և ետքը ձկնորսներուն
տնակները , ըսաւ հայրը :

Ո՛հ ուրախ եմ , ըսաւ պզտիկ աղջիկը •
ուրեմն իրիկունան եղածին վրայօք պիտի պատ-
մես , և պատմած ժամանակդ մենք ալ ծովը
կրնանք նայիլ :

Պայծառ առտու մըն էր , միայն թէ հովը
քիչ մը շատկէկ էր , ինչու որ փոթորիկէն
ետեւ բոլորովին իջած չէր : Նամբան տեղ տեղ
տիղմոտ էր , բայց իրենց հոգը չէր • ինչու
որ անոնց ոտքի ամանները հաստ էին , և ուր
որ ճամբան շատ գէշ էր , հայրերնին զիրենք
կը գրկէր :

Շուտով բլուրին գագաթը հասան , և հոն
իրենց ունեցած նստարանները չոր գտնելով ,
նստան քիչ մը յողնութիւն առնելու :

Ծովը վերջին անգամ տեսածնուն պէս հան-
գարտ և խաղաղ չէր • մեծ ու բարձր ալիքները
ցամաքին կը զարնէին , և իրենց ճերմակ փրո-
փուրները օդն ՚ի վեր կը հանէին : Ալիքներուն
ձայնը անանկ ամուր էր , որ հարկ եղաւ Մա-
րիամին ու Յակոբին և հօրը բարձր ձայնով
խօսիլ՝ իրար լսելու համար : Տղաքները բարձր
տեղ մը ըլլալովնին ծովէն չէին վախնար , և
կը սիրէին անոր ձայնը լսել :

Հիմա , հայր՝ ըսին անոնք , իրիկունան ե-

դածը , և անանկ թրջելուդ պատճառը կը հա-
ճին մեզի պատմել :

Գ Լ Ո Ւ Խ Լ

Ձ Կ Ն Ո Ր Ս Ն Ե Ր Ո Ւ Ն

Վ Տ Ա Ն Գ Ի Ի Մ Ե Ջ Ը Լ Լ Ա Լ Ը

Հայրը ըսաւ , երէկ երբոր ան տնակները
հասայ • գտայ որ մեզի պատմուածը շիտակ
էր : Խեղճ կնիկները շատ տրտմութեան մէջ
էին : Ծովուն վրայ միայն մէկ նաւակ մը կը
տեսնուէր , ու հիմակուան տեսածնէդ աւելի
ալէկոծութիւն կար , ու ծովեզերքը մէկ քանի
մարդ կային , որ երեցած նաւակին կը նայէին :

Բայց , հայր , հարցուց պզտիկ աղջիկը ,
ան մարդիկը ինչո՞ւ ծովը ելան անանկ փոթո-
րիկի ժամանակ :

Իմ սիրելիս , անոնք փոթորիկը սկսելէն
առաջ գացեր էին : Ձկնորսները երբեմն ի-
րիկուրնէ կ'ելլեն , և բոլոր գիշեր ծովը կը կե-
նան ձուկ բռնելու համար : Աս անգամ ալ
անանկ ըրեր էին , և մինչև կէս գիշեր բան
մը չկար :

Ալիքները մեր տեսած նաւակը ասդին ան-
դին կը տարուբերէին , և մենք կը վախնայինք
թէ ան խեղճ ձկնորսները ծովը ընկղմած էին
փոթորիկը այնչափ սաստիկ եղած ժամանակը :
Բայց քանի որ աս խօսքը կ'ընէինք , ո՛հ ի՛նչ
ուրախութիւն էր որ հեռուէն դիտեցինք թէ
պզտիկ առագաստ մը բացուեցաւ , և նաւա-
կը երթալով ծովեզերքը մօտեցած ատենը տե-
սանք թէ ամէն բան տեղն էր : Աւաւակին մէջ
իրեք մարդ կար . և որչափ ուրախ պիտի ըլ-
լայիք երբ աս խեղճ մարդոց կնիկները և զաւ-
կրները տեսնէիք որ նաւակը ցամաքը չքաշած
ալիքներուն մէջէն կը վազէին զանոնք դիմաւո-
րելու : Ծովեզերքը եղող մարդիկները կըր-
ցածնուն չափ օգնութիւն ըրին անոնց , և շի-
տակը ըսելով խեղճ ձկնորսները օգնութեան
կարօտ էին : Թէև փոթորիկին վտանգներէն
ազատեր էին , բայց շատ ալ յոգներ էին :

Ասիկայ միայն մէկ նաւակն էր , միւս եր-
կուքը ո՛ւր էին : Ակած մարդիկները չէին կըր-
նար ըսել : Փոթորիկը սկսելէն ետև ս'լ չէին
տեսած զանոնք : Աւստի քանի որ կնիկներէն
ումանք ուրախութեամբ լեցուն էին , երիկնին
ապահով դառնալուն համար , ուրիշները դառ-
նապէս կու լային՝ վախնալով թէ իրենցները
կորսուած ըլլան :

Ի այց մեր Արկնաւոր Հայրը հաճեցաւ անոնց տրտմութիւնը ուրախութեան փոխելու : Առաջին նաւակը ցամաքը քաշուելէն քիչ մը ետեւ , մարդ մը որ դիտակով ծովը կը դիտէր , պօռաց . «Նաւակի պէս բան մը կը տեսնամ» : Մենք ամէնքս իր ցուցուցած տեղը նայեցանք , և պզտիկ բիծի մը չափ բան մը տեսանք : Ինքը կրկին ըսաւ թէ իր տեսածը նաւակ մըն էր , բայց տակնուվրայ եղած էր : Ան ատենը դիտակը ինծի տուաւ , և ես ալ անով նայեցայ : Իրաւ էր ըսածը , նաւակը տակնուվրայ եղած էր , բայց ինծի կու գար որ մարդու մը պէս բան մը կը տեսնէի անոր վրայ : Աւստի ժամանակ չկորսընցունելով ուրիշ նաւակ մը շուտով ծովը իջեցուցին՝ մէջը վեց մարդով :

Ի ուն ալ մտա՞ր , հայր , ըսաւ աղջիկը :

Այո՛ , Մարիամ , վեց մարդերուն մէկը ես էի :

Աւրեմն քու հանդերձիդ անանկ թրջելուն պատճառը աս էր , ըսաւ Մարիամ , և ան տակնուվրայ եղած նաւակը հասա՞ր :

Այո՛ , ուրախ եմ ըսելու թէ ճիշդ ան խեղճ մարդիկը խղճուելէ ազատելու ժամանակը հասանք : Արկու մարդ կային հոն՝ որ նաւակը բռներ կախուեր էին , և ուժերնին գրեթէ հաս-

տեր էր , ինչու որ քանի մը ժամ աս վիճա-
կին մէջ մնացած էին : Յիրաւի կրցածնուս
չափ արագ թի կը քաշէինք որ շուտով անոնց
հասնինք , և շատ ուրախ եղանք աս երկու
կէս խղճուած մարդիկներուն հետ մէկ տեղ
կրկին ցամաքը հասնելնուս :

Եւ միւս նաւակը ի՞նչ եղաւ , հայր , ը-
սիր թէ իրեք հատ կար :

Այո , և անոր համար էր որ անանկ եր-
կայն ժամանակ սպասեցի երէկ իրիկուն . ին-
չու որ ծովեզերքէն մատ մը անդին չգացի մինչև
որ միւս նաւակը չտեսայ , և ետքը քիչ մ'ալ
սպասեցի մինչև որ ձկնորսները ողջ ցամաքը
հասած տեսայ : Ամէնքը՝ այսինքն ձկնորս-
ները , կնիկները և տղաքները շատ երջանիկ
էին անոնցմէ բաժնուած ժամանակս , ինչու որ
թէև ձուկ բռնած չէին , և գուցէ նաւակ մըն
ալ կորսընցուցիր էին , և անոնցմէ ոմանք շատ
վտանգաւոր վիճակի մէջ ինկած էին , բայց
փոթորիկէն կեանքի կորուստ մը չէր եղած :

Հիմա ան տնակները երթանք , ու ան խնդ
մարդիկներուն վրայով հարցունենք՝ որ այն-
չափ ժամանակ նաւակէն կախուած ջուրիե
մէջ մնացիր էին :

Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ա Լ Ո Ւ Թ Ի Ի Ն

Մարիամ ու Յակոբ դէպ 'ի ձկնորսներուն տուները գացած ատեննին հօրերնուն առջևէն կը վազէին, ինչու որ ճամբան աղէկ գիտէին: Հոն մօտեցած ատեննին տեսան որ անոնցմէ ոմանք առագաստներ և ուռկաններ կարկըտելու զբաղած էին:

Պինտ առաջ խղճուելու վտանգէն ազատած մարդիկը տեսնելու գացին, որոնք իրենց կնիկներուն հողողութեամբը հիմա քիչ մը աղէկցեր էին և կրնային քաշիլ, ու մինչև անգամ կ'ըսէին թէ մէկ երկու օրէն կրկին ծովը ելլելու կարող պիտի ըլլան:

Հապա ի՞նչպէս կրնաք երթալ առանց նաւակի, հարցուց տղան:

Իայց նաւակը կորսուած չէ, անիկայ գրտնուած և ցամաքը բերուած է, և տակնուվըրայ ըլլալէն շատ ալ մնասուած չէ:

Մարիամին ու Յակոբին հայրը շատ ուրախացաւ ասիկայ լսելուն, ինչու որ գիտէր թէ աս մարդիկը շատ նեղութիւն պիտի քաշէին թէ որ նաւակնին կորսուած ըլլար:

Չկնորսները՝ իրենց ընտանիքներովը մէկտեղ

շատ շնորհակալ եղան իրեն , իր անոնց ըրած
օգնութեանը համար :

Մարիամ ու Յակոբ անոնց ըրած խօսքը
մեծ հաճութեամբ լսեցին , և շատ ալ ուրախ
եղան , որ հայրերնին ուրիշներու օգնելու ա-
ռիթ գտած ատենը վտանգէն չփախաւ :

Հայրերնին ալ ըսաւ ձկնորսներուն թէ՛ կը
յուսամ որ ձեզ վտանգէ և մահէ Մզատողին
շնորհակալ ըլլալու մոռցած չէք : Մստուած
թէ որ չօգնէր ձեզի՝ մարդոց օգնութիւնը պա-
րապ պիտի ըլլար : Այլ ձեզմէ կը խնդրեմ որ
աս ճշմարտութիւնը յիշէք , թէ Մստուած է
որ ամէն օր մեզ վտանգէ ազատ կը պահէ՝
թէ ցամաքը ըլլանք , ու թէ ծովուն վրայ :
Յետոյ իր գրպանէն (էէ-պ) պզտիկ Մստուա-
ծաշունչ մը հանեց , և ան մարդոցը հարցուց
թէ ժամանակ ունի՞ք որ ձեզի մէկ քանի տուն
բան կարդամ :

Անոնք ըսին , Այո՛ , կ'ուզենք կարդացածդ
մտիկ ընել . և անոր բոլորտիքը ժողվուեցան
իրենց կնիկներուն և տղաքներուն հետ մէկտեղ :
Շատ զուարճալի բան մըն էր այնքան զուարթ
երեսներ տեսնել անանկ մէկ տեղ մը՝ ուր որ օր
մը առաջ այնքան տրտմութիւն կը տիրէր :

Իր կարդացած տուները 107^{ՅԵ} Սաղմոսին
սա հետեւեալ տուներն էին :

Մաւերով ծովը իջնողները , ու մեծ ջուրերու մէջ գործ գործողները :

Ընոնք Տէրոջը գործքերը ու անոր հրաշքները կը տեսնեն անդունդին մէջը :

Վասն զի ան կ'ըսէ , ու մրրկալից հովը կը հանէ , որ անոր ալիքները կը բարձրացընէ :

Արկինքը կ'ելեն ու անդունդը կ'իջնեն , անոնց անձերը նեղութենէ կը հալին . Գինով մարդու պէս կը դողդղան ու կ'երերան , և անոնց բոլոր իմաստութիւնը կը հատնի :

Ըն ատենը Տէրոջը կ'աղաղակեն իրենց նեղութեանը մէջ , ու կը փրկէ զանոնք իրենց տառապանքներէն :

Մրրիկը հանդարտութեան կը դարձընէ , ու ալիքները կը դադարին :

Իրենք ալ կ'ուրախանան որ դադարեցան , և կ'առաջնորդէ անոնց՝ իրենց ուզած նաւահանգիստը :

Թող գոհանան Տէրոջմէն իր ողորմութեանը համար , ու մարդոց որդիներուն իր ըրած հրաշքներուն համար :

Ըսոնք կարդալէն ետքը ուրիշ քանի մը խօսքեր ալ ըրաւ ձկնորսներուն , խնդրելով անոնցմէ՝ որ չմոռնան թէ միայն Մատուած կարող է մեզ ազատել թէ աս աշխարհիս վատանդներէն , ու թէ հանդերձեալին մէջ մեղ-

քին արժանաւոր պատիժէն : Ետքը մնաք
բարով ըսելով, Մարիամին ու Յակոբին հետ
մէկտեղ ըլլալը ելաւ :

ԳԼՈՒԽ ԼԳ

ԱՍՏՈՒԾՈՅ ՔԱՂՅՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵԶ ՍՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՋՆՈՐԴԷ

Ղամբուն վրայ՝ քանի որ տուներնին կ'երթային, Յակոբին ու Մարիամին հայրը հարցունց իրենց թէ, Հասկըցս՞ք Եստուածաշունչէն կարդացածս :

Կարծեմ թէ քիչ մը հասկըցայ, ըսաւ Մարիամ :

Ուրեմն կը յուսամ թէ ան հասկըցածդ պիտի չմոռնաս : Են այսօրուան ողջ և առողջ տեսած մարդիկդ, կրնար ըլլալ որ ծովին մէջ խղդուէին թէ որ Եստուծոյ ողորմութիւնը և քաղցրութիւնը չըլլար • և ան ատենը իրենց խեղճ կնիկները և տղաքները շատ տրտմութեան ու ցաւի մէջ պիտի ըլլային : Կը վախնամ թէ անոնցմէ ոմանք աս ողորմութեանը վրայօք պէտք եղածին չափ չեն մտմտար :

Մարդոցմէ ոմանք Աստուծոյ վրայ չեն մըտ-
մըտար իրենց հարկ եղած կերպովը . և իրօք
անոր վրայօք դրեթէ բնաւ չեն խորհիր , միայն
թէ երբոր շատ նեղութեան մէջ իյնան : Ա-
սիկայ շատ ցաւալի բան մըն է , և կը ցու-
ցունէ թէ սիրտերնին չար է :

Ոմանք թէպէտ միշտ կ'ընեն ան բաները որ
գիտեն թէ Աստուած արգիլած է իր Սուրբ
Քիրքին մէջ , և բնաւ միտքերնէն չեն ան-
ցուներ անոր պատուիրած բաները կատարել ,
բայց վտանգի մէջ եղած ժամանակնին , կ'սկսին
Աստուծմէ օգնութիւն խնդրել : Ասիկայ ի-
րաւունք է : Աղէկ է ամէն ժամանակ Աս-
տուծմէ օգնութիւն խնդրել , և ամէն օր ա-
ղօթք ընել անոր և օրէնել զինքը . բայց թէ
որ ասիկայ միայն տրամութեան մէջ եղած ա-
տեննիս ընենք , և ուրիշ ժամանակ անոր դէմ
մեղանչենք , չենք կրնար յուսալ որ ան մեր
աղօթքը պիտի լսէ :

Միանգամայն կ'ուզեմ որ դուք գիտնաք
թէ Աստուած այնչափ քաղցր և ողորմած է ,
որ շատ ատեն չար մարդիկներուն անգամ կ'օգ-
նէ , երբոր անոնք իրմէն օգնութիւն խնդրեն :
Աս բարերարութիւնը երբեմն մարդիկ իրենց
մեղանչական կեանքերէն զղջալու կ'առաջնոր-
դէ , ու նաև ներում խնդրելու Աստուծոյ

Որդւոյն Յիսուսի միջնորդութեամբը, որ մեզ
զաւորները փրկելու եկաւ :

Եւ ճշմարտութիւնը պիտի յիշէք թէ Եւս-
տուծոյ քաղցրութեան նպատակը մեզաւորները
գէպ 'ի ապաշխարութիւն առաջնորդել է :

Պ Լ Ո Ւ Ի Ի Լ Ի

Ս Պ Ա Շ Ի Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ի Կ Չ Է

Բայց կարծեմ թէ ապաշխարութիւն բառին
միտքը աղէկ չէք գիտեր թէ ինչ ըսել է : Եւս
բառը պզտիկ տղոց դժուար է հասկընալ :
Ուստի ձեզի ըսեմ ինչ նշանակելը : Մարիամ,
կը յիշե՞ս թէ անցած շաբթու օր մը պզտիկ
աղջիկ մը շատ չարութիւն ըրաւ . բարկանա-
լով թէ Եննա . . . :

Մարիամ չսպասեց որ հայրը մնացածը ը-
սէր, ինչու որ աղէկ գիտէր թէ հայրը որուն
վրայօք կը խօսէր :

Ես էի ան, ըսաւ, բայց մէյմ'ալ պիտի
չընեմ :

Եւ յո՛, դուն էիր, Մարիամ, և թէև հայրդ
ու մայրդ տրտմեցան իրենց զաւկին չարագոր-
ծութեանը համար, բայց միանգամայն ուրա-

խացան ալ երբոր անիկայ անոնց եկաւ ըսե-
լով, «Իմ ըրածիս համար կը տրտմիմ, և
ասկէց ետքը պիտի ջանամ աւելի լաւ աղջիկ
մը ըլլալ»: Սենք աս խօսքը անկեղծութեամբ
ըսելուդ տարակոյս չունէինք, ուստի ըսինք
թէ դուն արդեամբք ապաշխարած ես:

Եւ նոյնպէս երբոր մարդիկ իրենց ըրած չա-
րութիւններուն և իրենց երկնաւոր Հօրը դէմ
մեղանչելուն համար կը տրտմին, կ'ըսենք թէ
անոնք կ'ապաշխարեն և իրենց տրտմութիւնը
ապաշխարութիւն կը կոչուի: Հիմա կը հաս-
կընամ ապաշխարութիւն ինչ ըսել է:

Ե, յո՛, հայր, ըսաւ Մարիամ:

Ուստի երկու բան ալ կայ, որ դուն և
Յակոբ միտքերնիդ պահելու էք: Պիտի ջա-
նաք անանկ ընել: Եւ աղին բանը աս է թէ
Եստուած խօսք տուած է՝ ամէն ճշմարտապէս
ապաշխարողին ներել: Միւսն ալ աս է՝ թէ
ամէն ճշմարտապէս ապաշխարող շատ զգոյշ
պիտի ըլլայ որ կրկին չարութիւն չընէ:

Հէրիք չէ քեզի կը զղջամ ըսել,

Ու չարութիւններդ ալ շարունակել •

Եւ ապաշխարութեան յայտնի նշանը

Սորէն չընելն է սիրած մեղքերը •

Ու ապաշխարելու անկեղծութիւնով՝

Յայտնի ցուցունել մէյմ՝ ալ չընելով:

Գ Լ Ո Ւ Խ Լ Ե

Յ Ի Ս Ո Ւ Ս Ք Ը Ի Ս Տ Ո Ս

Ա Մ Է Ն Բ Ա Ն Ի Ն Տ Է Ը Ն Է

Հայրը ըսաւ Մարիամին ու Յակոբին : Հիմա մէկ երկու րոպէ ծառերուն տակը նստինք ,
 և քանի որ ծովը կը նայիք՝ փոթողիկի մը պատմութիւնը ընեմ ձեզի : Ժամանակաւ նաև մը կար ծովուն վրայ :

Ըս ծովուն վրայ՝ հայր , հարցուց Յակոբ :
 Չէ , աս ծովուն վրայ չէր , ասկէ շատ հեռուն՝ աշխարհիս մէկ ուրիշ կողմը : Ըս նաևը ցամաքէն ելած Ժամանակը ծովը շատ հանդարտ և խաղաղ էր , և տակաւին եզերքէն շատ չբացուած :

Չկնորս կար անոր մէջ , հարցուց Մարիամ :

Չկնորս ալ կար և ուրիշներ ալ : Ընոնք աս անգամ ձուկ բռնելու համար ծովը ելած չէին , հապա ծովուն միւս կողմը անցնելու համար : Ալբերնէն քիչ մը ետքը մեծ փոթորիկ մը ելաւ : Հովը շատ սաստիկ կը փչէր , և ալիքները այնչափ բարձրացան որ նաևը կը ծածկէին : Մարդիկ գիտցան իրենց վտանգաւոր վիճակը և սկսան ելելօք վախնալ : Բայց

Նաւուն մէջ մէկը կար որ թէև փոթորիկը
այնչափ սաստիկ էր, սակայն ինք վախ չունէր •
և հանդարտ կը քնանար նաւուն մէկ կողմը •
ու փոթորիկէն ամենեին չէր խռովեր : Ատքը
նաւուն մարդիկը անոր քովը եկան և արթըն-
ցուցին անիկայ : Ար խորհէին որ եթէ զերեւոյս
ազատող մէկը կայ՝ ան է, և անոր ըսին •
«Ազատէ մեզ • ինչու որ ահա կը կորսուինք» :
Ան ատենը ան ալ ելաւ և ծովուն նայելով ը-
սաւ • «Իադրէ՛ լուռ կեցիր» : Աս ըսած ժա-
մանակը հովը դադարեցաւ և ալիքները հան-
դարտեցան • և մեծ խաղաղութիւն եղաւ :

Իստէք՝ ասիկայ ո՞վ էր, որուն՝ հովը և
ալիքները նազանդեցան :

Ո՞վ էր անիկայ, հայր :

Տէր Յիսուս Բրիստոս էր, և ան մար-
դիկները իր աշակերտներն էին :

Ո՞րչափ գթած էր Յիսուս որ նեղութեան
մէջ եղող մարդոց աղաչանքներուն մտիկ կ'ը-
նէր • և ո՞րչափ զօրաւոր եղած պիտի ըլլայ իր
խօսքը, որ փոթորիկը անգամ անոր նազան-
դեցաւ :

Պատճառը աս մեծ ու փառաւոր ճշմար-
տութիւնն է՝ թէ Յիսուս Բրիստոս ամէն
բանին տէրն է :

ԿՌՈՒԱՍԵՐ ՏՂԱՔՆԵՐԸ

Մարիամին ու Յակոբին տանը մօտ տուն մը կար , ուր երկու տղաք և երկու աղջիկ իրենց հօրը ու մօրը հետ կը բնակէին :

Ասոնք երջանիկ ընտանիք մը չէին , ինչու որ տղաքները շատ անգամ կռիւ կ'ընէին և մէկը մէկու գէշ անուէներ կու տային և իրար կը ծեծէին :

Երբեմն Մարիամ ու Յակոբ իրենց պարտէզին մէջ խաղացած ժամանակնին անոնց բարձրաձայն աղաղակը կը լսէին , և երբեմն ալ փողոցը կը տեսնէին զանոնք որ մէկըմէկ կը ծեծեն և իրարու հող կը նետեն . և իրենք շատ կը տրտմէին երբոր աս բաները կը տեսնէին և կը լսէին : Անոնք կը խորհէին և օր մը հօրերնուն ալ ըսին որ , եթէ մեր սիրելի պզտիկ Յովհաննէս եղբայրը ողջ եղած ըլլար , մենք անոր բան մը պիտի չընէինք . կամ անոր հետ խստութեամբ պիտի չվարուէինք .

Անգամ մը աս կռուասէր տղաքները մէկտեղ խաղացած ատեննին , աղջիկներէն մէկը ձեռքով իր մեծ եղբօրը զարկաւ ու փախաւ : Ան ատեն տղան գետնէն մեծ քար մը առաւ

և իր քրոջը ետևէն վազեց • և այնչափ բարկացեր էր որ վազելու ժամանակը քեզ պիտի մեռցունեն՝ կը պօռար : Աղջիկը շատ վախցաւ • ինչու որ գիտէր թէ եղբայրը իրմէ զօրաւոր է , և բարկացած ատենը ինչ մնաս որ տայ՝ հոգը չէ : Աւստի կրցածին չափ արագ կը փախչէր • բայց եղբայրը աւելի շուտով կը վազէր , և զինքը պիտի բռնէր թէ որ ան պարտէզը չմտնէր , ուր էին Մարիամ ու իր հայրը : Աղջիկը վազեց անոնց քովը գնաց ու ըսաւ , իմ գէշ եղբօրս մի՛ թողուք որ ինձի մօտենայ , զիս պիտի մեռցունէ :

Տղան իր քրոջը ետևէն կը վազէր ու Մարիամին հայրը չտեսած՝ պարտէզը մտեր էր : Ատքը երբոր տեսաւ՝ կանկ առաւ և ետ պիտի դառնար , թէ որ Մարիամին հայրը չըսէր , «Գե՛որգ՝ ատ քարը վա՛ր դիր և հո՛ս եկուր» :

Գեորգ իրեն հրամայուածին պէս ըրաւ • քանզի կը վախնար փախչիլ , բայց կամաց կամաց կը քալէր : Աերջապէս անոնց քովն եկաւ , և Մարիամին հայրը տղին և քրոջը մէյմէկ ձեռքէն բռնած հովանիի մը տակը մտաւ և հոն անոնց հետ խօսեցաւ : Մարիամ ու Յակոբ ալ հոն գացին հօրերնուն ըսածը լսելու :

ԿՌՈՒՒԼ ՈՒ ԾԵԾԿՈՒՒԼԸ

ՇԱՏ ՉԱՐ ԲԱՆ ՄԸՆ Ե

Մարիամին ու Յակոբին հայրը շատ մարդասիրութիւն ցուցրցած էր ան անզգամ տղաղոցը : Երբեմն պզտիկ գիրքեր կու տար անոնց կարդալու . երբեմն իր գործին կը խրկէր զանոնք , և երբեմն ալ իր պարտէզը մաքրել կու տար անպիտան խոտերէն , և ասոր համար ստակ կու տար անոնց , և երբոր անոնց հանդիպելու ըլլար , սովորութիւն ունէր մարդասիրութեամբ հետերնին խօսելու : Անոնց իր հետը երթալ հաճելուն պատճառը աս էր :

Ինքը հովանիին տակը նստաւ և պրզտիկ աղջիկը իր քովը նստեցուց և եղբայրն ալ միւս կողմը կայնեցաւ :

Քու ձեռքդ բռնած քարովդ ի՞նչ պիտի ընէիր , հարցուց տղուն :

Լուսիան ինծի զարկաւ , և միշտ կը զարնէ ինծի , հարցուց տղան :

Այո՛ , բայց ի՞նչ պիտի ընէիր ատ քարովը :

Ըսաւ թէ քեզ պիտի մեռցունեմ , ըսաւ Լուսիա :

Հասկըցայ բանին ինչպէս ըլլալը , դուք
կրկին կուիւ ըրեր էք :

Ան ատեն Վեորգը և Նուսիան սկսեցին
յանցանքը մէկզմէկու վրայ ձգել : Մարիա-
մին հայրը անոնց ըսածին մտիկ ընելէն ետե
սկսեց անոնց հետ խօսիլ :

Եղբայրներուն և քոյրերուն իրարու հետ
ծեծկուիլը որչափ ցաւալի բան է ըսաւ :
Եւ անոնց միտքը ձգեց Աայէնը որ այնչափ
չար էր որ իր Աբէլ եղբայրը մեռցուց . ու
նաև պատմութիւն մըն ալ ըսաւ անոնց իր
ճանչցած մէկ պզտիկ տղուն վրայ, օք , որ բար-
կութեամբ իր պզտիկ եղբայրը զարկեր մեռ-
ցուցեր էր :

Ան ատենը Վեորգին ըսաւ . դիցուք թէ
քոյրդ քու այնչափ բարկացած ատենդ բռու-
նէիր , ինչ կ'ըսես , ան քարովը անոր պիտի
զարնէիր :

Վեորգ պատասխան չտուաւ :

Աարծեմ թէ անանկ պիտի ընէիր , ըսաւ
Մարիամին հայրը . և թէ որ այնչափ ծանր
բանով մը մէկ անգամ անոր զարնէիր , կըր-
նար ըլլալ որ անիկայ մեռցունէիր : Եւ հի-
մա՝ հոս ողջ ըլլալուն տեղը , ճամբուն վրայ
պառկած պիտի ըլլար արիւնը գլխէն վազե-
լով , և խօսելու ու շարժելու անկարող .

ատանկ տեսնել կ'ուզէիր քոյրդ Գե'որգ :

Ես միջոցիս տղուն արցունքը փլաւ : Անանկ բանի մը վրայ չէր ուզեր խորհիլ , և ըսաւ թէ շատ կը զղջամ :

Յետոյ Առսիային դառնալով այսպէս խօսեցաւ . որչափ մեղք է ուրիշը բարկացունելու համար բան մը ընելը : Ես կը տրտմիմ որ ձեռքդ կրցար վերցունել եղբայրդ ծեծելու . թէև միտք չունէիր զինքը շատ մնասել :

Եղջիկն ալ ըսաւ թէ կը տրտմիմ և սկըսեց լալ :

Յետոյ Մարիամին հայրը անոնց ըսաւ թէ դուք պարտաւոր էք մեղքերնիդ Աստուծոյ խոստովանիլ և անկէ թողութիւն խնդրել , նաև օգնութիւն՝ որ կրկին ասանկ չար բան մը չընէք : Միանգամայն ըսաւ թէ՛ եթէ իւրարու հետ խաղաղութեամբ վարուիք , շատ աւելի երջանիկ պիտի ըլլաք , և ան մեծ Աստուածը որ ամէն բան կը տեսնէ , ան տղաքները՝ որ սիրով կը վարուին , կը դիտէ և կը սիրէ զանոնք : Բայց ամէն օր կը բարկանայ կռուասէրներուն և կ'ըսէ թէ իմ եղած տեղս անոնք պիտի չգան :

Հիմա նայինք թէ Սուրբ Գիւրքը որ Աստուծոյ խօսքն է ի՞նչ կ'ըսէ ձեզի : «Պզտիկ տղաքներ մէկզմէկ սիրեցէք : Ան որ իր եղ-

բայրը չսիրեր , մահուան մէջ կը մնայ : Ամէն
 ո՛վ որ իր եղբայրը կ'ատէ մարդասպան է :
 Որդեակներս չէ թէ խօսքով ու լեզուով սի-
 րէք հապա գործքով ու ճշմարտութիւնով" :

Ան ատեն Քեորդն ու Ղուսիան պարտե-
 զէն դուրս հանեց , և անոնք երկուքը մէկտեղ
 խաղաղութեամբ տուն դարձան :

Գ Լ Ո Ւ Խ Ա

Մ Ե Ղ Ք Ի Ն Չ Ը Ս Ե Լ Է

Իմ պղտիկ Մարիամս ու Յակոբս , գիտէք
 մեզք ինչ ըսել է : Մարիամ ու Յակոբ ի-
 րենց հօրը հետ նստած էին կանանչ դաշտե-
 րուն մէջ եղած հովանաւոր պղտիկ բլրակին վը-
 րայ՝ անոր աս հարցունմն ըրած ժամանակը :

Մարիամ կը կարծէր թէ գիտէր , և ըսաւ •
 Այո՛ , ինչ որ գէշ է՝ մեզք է :

Բայց ինչպէս գիտես թէ որը գէշ է , և
 որը չէ , կրկին հարցուց հայրը :

Բարկանալը , քեզի ու մօրս ճնաղանդիլը ,
 և չար խօսք ըսելը գէշ է , պատասխանեց
 Մարիամ :

Այո՛ , ըսաւ հայրը • բայց իմ սիրելի աղ-
 ջիկս , իմ հարցմանս պատասխան մը չէ :

Ինչպէս գիտես թէ անանկ բաները գէշ բաներ են :

Ինչու որ դուն անանկ ըսած ես ինձի , հայր :

Ուրիշ մէկը քեզի անանկ բան մը ըսած չէ՞ :

Ե, յո՛ , մայրս ալ և Եննան ալ :

Բայց արդեօք ա՛լ ուրիշ մէկը ըսած չէ՞ , հարցուց հայրը :

Չեմ գիտեր , ըսաւ Մարիամ :

Ուրեմն ինձի մտիկ ըրէ , և ես քեզի ըսեմ թէ ուրիշ ո՛վ է անանկ ըսողը , և ո՛վ մեզի կը զրուցէ մեղքին ինչ ըլլալը : Պինտ առաջ քեզի ըսեմ թէ մեղք ինչ ըսել է : Եստուծոյ արգիլած բաները ընելը , կամ իր հրամայած բաները չընելը մեղք է :

Եստուած մեզի ըսած է թէ մենք պարտաւոր ենք զինքը սիրել բոլոր սրտովնս . և թէ որ զինքը անանկ չսիրենք , իրեն դէմ կը մեղանչենք : Ինքը մեզի հրամայած է ծնողքներնս սիրել , անոնց հնազանդիլ . և անանկ չընելը մեղք է :

Եստուած մեզի պատուիրած է ամենուն մարդասէր ըլլալ . և թէ որ մէկուն տմարդի ըլլանք , անիկայ մեղք է : Շատ բան կայ որ ինքը մեզի արգիլած է . դողութիւն ընելու չենք , Եստուծոյ անունը պարապ տեղը բերաննս առնելու չենք , ուրիշին բաներուն ցան-

կալու չենք , մտքերնուս մէջ պարապ և յի-
մար խորհուրդներ թող տալու չենք որ մըտ-
նան . թէ որ աս բաներէն մէկը ընենք , Աս-
տուծոյ դէմ մեղանչած կ'ըլլանք :

Աստուած է որ մեզի մեղքին ինչ ըլլալը
կը սորվեցունէ : Ինքը մեզի իր Սուրբ Գիրքը
տուած է , որ աս բաները սորվեցունելու հա-
մար Աստուածաշունչն է որ մեզ իմաստուն
կ'ընէ մեղքին ինչ ըլլալը գիտնալու : Առանց
անոր մենք շատ տգէտ պիտի մնայինք : Չէք
յիշեր թէ անգամ մը Աստուածաշունչ չու-
նեցող խեղճ և չար մարդոց վրայօք պատմած
եմ ձեզի :

Այո՛ հայր , կուռքի 'երկրպագութիւն ը-
նողները ըսել կ'ուզես :

Այլ . մեր վիճակը անոնցինէն աղէկ չպիտի
ըլլար , թէ որ Աստուածաշունչը իբր առաջ-
նորդ մեր ձեռքը չունենայինք : Արչափ ու-
րախանալու ենք արդեօք Աստուածաշունչ ու-
նենալնուս համար՝ որ մեզի մեղքին ինչ ըլ-
լալը կ'իմացունէ : Բայց դուք Աստուծոյ դէմ
բնաւ չէք մեղանչեր :

Մարիամ ու Յակոբ ըսին թէ կը վախնանք
որ երբեմն կը մեղանչենք :

Թէ որ իրեն դէմ մեղանչէք , ի՞նչ պիտի
ընէ ան :

Տղաքները պատասխան չէին կրնար տալ •
 ուստի հայրերնին անոնց տեղը պատասխանեց
 ըսելով թէ՛ Աստուած մեզ կամ պիտի պատ-
 ժէ , կամ մեզի պիտի ներէ : Թէ որ մեզ պատ-
 ժէ , մեր մեղքերուն պատիժի արժան ըլլալ-
 նուն համար պիտի ըլլայ , և մեր չապաշխա-
 րելուն կամ թողութիւն չխնդրելուն համար :
 Եւ թէ որ ինքը մեզի ներէ , Տէր Յիսուս
 Քրիստոսի համար պիտի ըլլայ ան :

Գ Լ Ո Ւ Խ Լ Ը

Ա Ս Տ Ո Ւ Ժ Ո Յ

Բ Ա Ր Ե Կ Ա Մ Ը Լ Լ Ա Լ Ո Ւ Ճ Ա Մ Բ Ա Ն

Հիմա պատմութիւն մը ըսեմ ձեզի գրեթէ
 ձեր տարիքը եղող պզտիկ աղջիկան մը վրայօք :
 Ինքը երբեմն չարութիւն ըրած էր , և Աս-
 տուծոյ սուրբ օրէնքին դէմ մեղանչած ըլլալը
 կը զգար , ուստի ինքը շատ տխուր էր :

Իայց օր մը տեսնուեցաւ թէ ինքը երջա-
 նիկ էր : Իր աչուրները ուրախութեամբ կը
 փայլէին , և կ'երևար թէ ինքը չէր կրնար
 տանիլ իր զգացած ուրախութիւնը , որ այն-

չափ մեծ էր : Մէկը ան պզտիկ աղջկանը
 հարցուց • դուն որ առաջ այնչափ տխուր
 էիր , ինչո՞ւ համար հիմա անանկ ուրախ ու
 զուարթ ես :

Ո՛հ , ինչու որ շատ երջանիկ եմ , ըսաւ
 ինքը :

Բայց ինչո՞ւ շատ երջանիկ ես , կրկին հար-
 ցուց նոյն անձը , և ան ատենը սա պատաս-
 խանը տուաւ :

Եստուած բարկացուցեր էի , և անոր հա-
 մար տրտոււմ էի • բայց հիմա յոյս ունիմ թէ
 ինքը ինձի ներած է :

Եսիկայ բաւական չէ՞ տղու մը սիրտը ու-
 թախացունելու , զգալով թէ Եստուած իր
 բարեկամը եղած է :

Եյո՛ , ըսաւ Մարիամ ևելօք բաւական է :

Ուստի իմ սիրելի տղաքներս , դուք ալ
 կ'ուզէք Եստուծոյ բարեկամները ըլլալ : Ե-
 նանկ ըլլալու մի միայն ճամբան աս է որ Քրիս-
 տոսէն խնդրենք որ ինքը մեր բարեկամը և
 Փրկիչը ըլլայ : Թէ որ Քրիստոս մեր բարե-
 կամն է , Եստուած ալ մեր բարեկամը պիտի
 ըլլայ , ինչու որ Եստուած և Քրիստոս մէկ է :



Գ Լ Ո Ի Խ Ի Թ

Ա Ս Ա Շ Ի Ա Ր Հ Ս

Մ Ե Ր Բ Ն Ս Կ Ա Ր Ա Ն Ը Զ Ի

Ո՛հ հայր , բնակարան երբ պիտի հասնինք ,
 ըսաւ Յակոբ , որ հօրը հետ պտըտելու գա-
 ցեր էր : Պզտիկ տղու մը համար երկայն ճամ-
 բայ մըն էր ան • ու թէև ճամբուն մէկ մասը
 գրկելով տարուեր էր , տակաւին յոգներ էր ,
 և կ'ուզէր տունը գտնուիլ : Ո՛հ • երբ պի-
 տի բնակարանը հասնինք արդեօք , կ'ըսէր ին-
 քը կրկին և կրկին :

Հիմա պիտի հասնինք հոն , ըսաւ հայրը :
 Տանը ծխնելոյցը և անոր քովը եղած ծառին
 գլուխը կը տեսնեմ հիմա • և դուն ալ նայէ-
 ըսելով վեր վերցուց պզտիկ տղան որ ծխնե-
 լոյցը և ծառը տեսնէ :

Յակոբ հօրը գիրկը ըլլալով չուզեց նորէն
 վար իջնալ : Եսանկ քիչ մը կը տանին զիս
 հայր , ըսաւ ինքը :

Ե.յո՛ , մնացած ճամբան քեզ կը տանիմ ,
 թէ որ թեղ ճիտիս վրայ դնես : Հիմա միտքս
 բան մը ձգեցիր ըսաւ հայրը , և անիկայ քե-
 զի ըսեմ : Աւրիշ բնակարան մը կայ ուր

մենք երկուքս ալ երթալու վրայ ենք : Բայց
կը հասկընան թէ աս խօսքովս ինչ ըսել
կ'ուզեմ :

Չէ հայր , ըսաւ Յակոբ , մենք ուրիշ բնա-
կարան չունինք • անանկ չէ :

Եյո՛ , իրօք ունինք , ըսաւ հայրը : Են
տունը որ հիմա կ'երթանք • մեր բուն իսկ բնա-
կարանը չէ :

Ո՛հ հայր , պատասխանեց պզտիկ տղան , բայց
մենք հոն կը բնակինք միշտ • անանկ չէ :

Եյո՛ , Յակոբ , բայց միշտ ան տանը մէջ
չպիտի բնակինք :

Չեմ ուզեր ան տունը ձգել , ըսաւ Յա-
կոբ տխրութեամբ • շատ զուարճալի բնակա-
րան մըն է ան :

Բայց աս աշխարհիս մէջ միշտ չպիտի կե-
նանք ըսաւ հայրը , և ան ատենը մեր բնա-
կարանը ո՛ւր պիտի ըլլայ : Ես աշխարհս մեր
բնակարանը չէ • և աս մեծ ճշմարտութիւնը մի՛
մոռնար : Մեր բնակարանը իրօք գալու աշ-
խարհին մէջն է , ուր հոգիներնիս պիտի եր-
թան մեռած ժամանակնիս , և ուր յաւիտեանս
պիտի մնանք :

Ես աշխարհիս մէջ բոլոր բնակողներուն հա-
մար երկու բնակարան կայ • մէկը շատ եր-
ջանիկ տուն մըն է , և անոր անունը երկինք

կըսուի . միւսը շատ տխուր տուն մըն է , ու
 րուն անունը դժոխք է : Տէր Յիսուս Քրիս-
 տոսը ամէն սիրողներուն բնակարանը երկինքն
 է , ուր Քրիստոս և ամէն արդարները կան :
 Ամէն անոնք՝ որոնց մեղքերը ներուած չեն ,
 բնակարանին դժոխքին մէջ պիտի ըլլայ իրենց
 մեռնելէն ետև , ուր որ միայն մեղք և տրտմու-
 թիւն կայ : Ա՛ր բնակարանը պիտի ընտրես :

Իրաւ որ իմ բնակարանս երկինքը ըլլալ
 կ'ուզեմ , ըսաւ Յակոբ :

Ես ալ կը հաւատամ որ անանկ կ'ուզես ,
 ըսաւ հայրը : Մենք Աստուծոյ խնդրելու ենք
 որ ինքը մեզ ան երկնաւոր բնակարանը եր-
 թալու համար պատրաստէ : Ան ատենը աս
 աշխարհս մեր բնակարանը չըլլալուն համար
 չպիտի տրտմինք . բայց միանգամայն շնորհա-
 կալ ըլլալու ենք աս աշխարհիս մէջ անանկ
 զուարճալի տեղ մը ունենալնու համար , ուր
 քիչ մը ժամանակ մեր բնակարանը պիտի ըլ-
 լայ , մանաւանդ Քրիստոնեայ ընտանիքի մը
 մէջ ըլլալնու համար : Աս խօսքին վրայ տա-
 նը մօտենալով , հոս վերջացուցին իրենց խօ-
 սակցութիւնը :

ԳԼՈՒԽ Խ

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴԻԿԸ

ՈՒ ԱՇԽԱՐՀԻ Ս ՍԱՐԴԻԿԸ

Որչափ տեսակ տեսակ մարդիկ կան աս աշխարհիս մէջ , հայր , հարցուց Մարիամ , որ ան ատենը իր հօրը սենեակը գիրք մը առած կը նայէր , որուն մէջ Հնդիկներու , Եփրիկեցիներու , Տաճիկներու , Հրէաներու և շատ ուրիշներու պատկերներ կային :

Մարիամ աս պատկերներուն շատ հաւնեցաւ , և նորէն ըսաւ . որչափ տեսակ տեսակ մարդիկ կան աս աշխարհիս մէջ . անանկ չէ՞ , հայր :

Միայն երկու տեսակ կան , պատասխանեց հայրը :

Ո՛հ հայր , աս գիրքին մէջ շատ կան . երկուքէն ևել , աղէկ գիտեմ :

Ո՛հ՝ քու միտքդ իմինիս համաձայն չէ : Ես աշխարհիս մէջ եղած մարդիկներուն , հեռու երկիր բնակողներուն , իրարու անհասկանալի լեզու խօսողներուն , զանազան հանդերձ հաղնողներուն որչափ տեսակ ըլլալը չեմ կրնար ըսել : Բայց իմ ըսածիս նայելով միայն երկու տեսակ մարդիկ կան աս աշխարհիս մէջ :

և ասոր վրայօք պիտի ըսեմ ձեզի :

Տեսակ մը մարդիկ կան՝ որ զԱստուած չեն սիրեր և անոր չեն ծառայեր , և որոնց մեղանչական սիրտերը սրբուած չեն : Աս մարդիկը՝ Աշխարհի որդիք կ'ըսուին : Անանկ կ'ըսուին , ինչու որ աշխարհը և աշխարհի բաները կը սիրեն : Անոնք՝ Չարին որդիքն ալ կ'ըսուին . ինչու որ Սատանան՝ Աստուծոյ չար թշնամին՝ անոնց տէրն ու մեղացը առաջնորդն է : Անոնք խեղճ մարդիկ են . ինչու որ՝ թէև աշխարհը շատ կը սիրեն , աղէկ գիտեն թէ աշխարհի մէջ միշտ չպիտի մնան . թէ և մեղքը կը սիրեն , աղէկ գիտեն թէ մեղքին պատիժը պիտի կրեն : Աստուած անոնց վրայ կը բարկանայ ամէն օր :

Միւս տեսակ մարդիկը անոնք են՝ որ զԱստուած կը սիրեն ու անոր կը ծառայեն : Անոնց սիրտերը փոխուած են . անանկ որ առջի ատաճ բարի բաներնին կը սիրեն , և առջի սրած չար բաներնին կ'ատեն : Աս մարդիկը՝ Աստուծոյ որդիքը կ'ըսուին : Աստուած կը սիրէ , կը պաշտպանէ և կ'օրհնէ զանոնք : Աս աշխարհիս մէջ եղած ժամանակնին Աստուած անոնց վրայ հոգ կը տանի , և մեռած ատեննին ալ երկինքը կ'ընդունի զանոնք յաւիտեան իր քովը երջանիկ ըլլալու :

Աշխարհիս մէջ աս երկու տեսակ մարդիկնե-
րէն զատ ուրիշ չկայ : Անոնք որ Աստուծոյ որ-
դիները չեն , Սատանային ու աշխարհի որդի-
ներն են : Աս երկու ընտանիքներէն որոնն մէջ
կ'ուզէք գտնուիլ , իմ սիրելի զաւկըներս :

Աստուծոյ զաւակ մը կ'ուզեմ ըլլալ , ը-
սաւ Մարիամ :

Ես ալ անանկ կ'ուզեմ , ըսաւ Յակոբ :

Մարիամին ու Յակոբին հայրը յոյս ունէր
թէ անոնք իրօք Աստուծոյ զաւկըները պիտի
ըլլային : Ինքը աղօթք ըրաւ որ իր սիրելի
զաւկըները Աստուծոյ ընտանիքին մէջ ըն-
դունուին՝ սուրբ և օգտակար ըլլալու հոս
ապրած ատեննին , և մեռած ատեննին ալ
երկինքը երջանիկ ըլլալու :



Գ Լ Ո Ի Խ Ի Ն

Ճ Շ Մ Ա Ր Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Մարիամ տղոց սենեակն էր , և իր հօրը զինքը կանչելը լսեր էր • և առջի պէս պատրաստ չերեցաւ անոր երթալու : Մինչև որ Մենան չըսաւ իրեն , Մարիամ չէն լսեր որ հայրդ քեզ կը կանչէ , իր գործքը չձգեց և սենեակէն կամաց մը դուրս չելաւ :

Իր այնչափ կամաց սենեակէն դուրս ելլելուն պատճառը արդեօք իր խաղալիքները ձրգել չուզելն էր • նայինք :

Մարիամ՝ Մարիամ , նորէն կանչեց հայրը աւելի բարձր ձայնով մը • աս անգամ աղջիկը պատասխան տուաւ և իր քովը գնաց :

Հայրը ձեռքէն բռնեց և իր սենեակը տարաւ անիկայ : Ան ատենը քաղցրութեամբ մը ըսաւ անոր • իմ դուրսը եղած ատենս հօսեկանք աս առտու :

Պզտիկ աղջիկը առջի բերան պատասխան չտուաւ • մէյմը հօրը նայեցաւ՝ մէյ մըն ալ սենեակին բոլորտիքը , և վերջապէս աչուրները գետինին վրայ տնկեց : Թէ որ կարող ըլլար իր երեսը հայելիի մը մէջ տեսնել անրոպէին , շատ կարմրած պիտի տեսնէր , և աչուրներն ալ արցունքով լեցուն :

Մարիամին հայրը քիչ մը համբերեց • ինքը չէր ուզեր իր պզտիկ աղջկանը սիրտը կոտրել , բայց աղջիկն ալ գիտէր թէ անիկայ պատասխանի կ'սպասէր :

Վերջապէս Մարիամ որոշեց իր ըսելեքը : Ինքը հօրը վեղը պլուեցաւ և հառաչելով մը ըսաւ • Այո՛ , հայր , հոս եկայ , և անիկայ կոտորողը ես էի : Միտքս անիկայ կոտրել չէր , հայր :

Այն եղելութիւնը ճշմարիտ էր : Մարիամ հոն գացեր էր , մօրը և Աննային հոն չեղած ատենը : Ինքը ուզեր էր իր հօրը հետ խօսիլ , բայց հայրը հոն չէր , և ինքը շիտակ ետ դառնալուն տեղը կայներ առաջ ասդին անդին նայեր՝ ու ետքը եղած բաները խառնէր էր :

Բարձրկէկ տեղի մը վրայ երկու գեղեցիկ յախճապակիէ արձաններ կային , և երբեմն հայրը թող կու տար որ ձեռքն առնէ զանոնք և հիմա նորէն միտքը իյնալով թէ ինքը որչափ զուարճութիւն պիտի զգայ նորէն զանոնք առնել նայելու • ուստի աթոռի մը վրայ ելաւ , և ձեռքը երկրնցուց անոնց մէկը առնելու : Ափսոս , ձեռքէն սահեցաւ և գետինը ինկաւ կոտորտեցաւ :

Արնաք խորհիլ թէ արդեօք Մարիամ որ

չափ վախցաւ ասկից : Սենեակէն դուրս վազեց և դուռը գոցեց , յուսալով թէ մէկը չպիտի իմանար իր հոն երթալը : Ասիկայ էր հօրը կանչած ժամանակը անոր քովը երթալ չուզելուն պատճառը • վախցաւ որ իր ըրած յանցանքը հայրը իմացեր էր :

Իրօք Մարիամին իր հօրը սենեակը երթալը Աստուծմէ զատ մէ'կը չէր գիտեր , բայց հայրը կարծիքով գիտէր անոր ինչպէս ըլլալը • և ասոր համար իր պզտիկ աղջիկը կանչեց և անոր ան հարցումը ըրաւ :

Արնաք խորհել թէ որչափ հօրը սիրտը դողի մէջ էր երբոր Մարիամին երեսէն տեսաւ թէ անոր սրտին մէջ իրարանցում մը կար թէ արդեօք սո՛ւտ մը զրուցէ թէ ճշմարտութիւնը , և որչափ ուրախ եղաւ հայրը երբոր ճշմարտութիւնը յաղթող եղաւ : Իր սիրելի զաւկին ըսածը թէ «անիկայ կոտորողը ես էի» , իրեն աւելի արժէք ունէր քան թէ բոլոր աշխարհիս մէջ եղած արձանները : Ինքը իր պզտիկ աղջիկը պագաւ , և ան բանին վրայ ունեցած իր չափազանց ուրախութիւնը յայտնեց անոր :

Աս կոտորած արձանը քու ճշմարտասիրութեանդ իբր մէկ յիշատակը պիտի պահեմ , ըսաւ ինքը • ու երբոր անիկայ տեսնամ , պի-

տի յուսամ թէ իմ Մարիամս բնաւ չպիտի վախնայ կրկին ճշմարտութիւն խօսելու, և հապա շիտակը պիտի զրուցէ երբոր յանցանք մը ըրած ըլլայ :

Մէկ ուրիշ բան մ'ալ ըսեմ : Ասկէց պիտի սորվիս արդիլուած բաները չխառնել ուրիշ ժամանակ : Հատ ցաւելու բան մը պիտի ըլլար թէ որ աս խառնելը սուտ խօսելու առաջնորդեր քեզ, և ինչպէս որ շատ անգամ անանկ կը պատահի :

Գ Լ Ո Ւ Խ Խ Ի Բ

Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ

Ճ Հ Մ Ա Ր Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ա Ս Տ Ո Ւ Ա Ճ Ն Է

Մարիամին արձանը կոտրած օրուան իրիկունն էր, որ հայրը զինքը ու Յակոբը հետը առաւ պտըտելու ելած ժամանակը, ու ծառի մը տակ նստաւ : Ան ատենը բարեսիրտ հայրը ըսաւ . Մեծ Աստուծոյն՝ մեզ Ստեղծողին վերայօք շատ բաներ ըսեր եմ . հիմա քիչ մը աւելի պիտի ըսեմ : Ինքը ճշմարտութեան Աստուածն է : Իր ըսածը բոլորովին ճշմարիտ է : Իր Սուրբ Գիրքը ճշմարտութեան գիրքն

է : Սուրբ Գիրքին մէջ Աստուած սիրողնե-
րուն և անկէ վախցողներուն շատ խոստմունք-
ներ կան , և աս խոստմունքներուն ամէն մէկ
բառը ճշարիտ է : Աս քաղցր խոստմունքնե-
րուն ամէն մէկը Աստուած պիտի պահէ :

Նրբոր Աստուծոյ խոստմունքները կարդանք ,
կամ լսենք , խորհելու ենք թէ արդեօք մեզի
համար են անոնք , թէ չէ : Թի որ մեզի հա-
մար են , ուրախանալու ենք որ ամէնքը պիտի
կատարուին : Նրբոր Աստուծոյ սպառնալիք-
ները կարդանք , կամ լսենք , վախնալու ենք
որ չըլլայ թէ մեզի դէմ խօսուած ըլլան ա-
նոնք , և աղօթք ընելու ենք որ Աստուած մեր
մեղքերը ներէ իր սիրելի Արդւոյն համար . և
ասանկ իր սպառնալիքները կրելէն ազատէ
զմեզ : Աստուծոյ ժողովուրդները ճշմարտու-
թիւնը կը սիրեն : Անոնք չեն համարձակիր
սուտ զրուցել :

Աստուած շատ կը սրդողի սուտ զրուցնե-
րուն : Ինքը սուտ շրթունքները կ'ատէ , և
սուտ խօսողները պիտի պատժէ : Ինքը շատ
անգամ աս աշխարհիս մէջ կը պատժէ զա-
նոնք , և անշուշտ գալու աշխարհին մէջ ալ
պիտի պատժէ զանոնք . ինչու որ ինքը ըսած
է թէ ամէն սուտ զրուցներուն բաժինը դժոխ-
քը պիտի ըլլայ :

Իմ սիրելի զաւկընէրս , չը պիտի յիշէք աս
բաները , և միշտ ձեր սիրտէն ճշմարտութիւն
խօսիք : Ձեր երկնաւոր Հօրը աղօթք ընելու
էք՝ որ ինքը ձեզի օգնէ իր Սուրբ Հոգիովը
անանկ ընելու :

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

Ի Ն Չ Բ Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

Ա Ղ Օ Թ Ք Ը Ն Ե Լ Ո Ւ Ե Ն Ք

Աստուածաշունչին մեծ ճշմարտութիւննե-
րուն ուրիշ մէկը պիտի ըսեմ ձեզի , և ան-
կէ ետե տուն դառնալու ենք : Արնա՞ք երկուքդ
ալ մէկ երկու բոպէ ալ հանդարտ նստիլ :

Մարիամ ու Յակոբ ըսին , կ'ուզենք քիչ
մ'ալ քովդ նստիլ , և ըսելիքդ մտիկ ընել :

Ի ուք գիտէք աղօթք ինչ ըսել է , անանկ
չէ՞ , ըսաւ հայրը : Աղօթք ընելը Աստուծոյ հետ
խօսիլ է , և մեր կարօտութիւնները անոր
պատմել , և իր օրհնութիւնը և ամէն մեզի
պէտք եղած բաները իրմէն խնդրել :

Այո՛ , ըսին Մարիամ ու Յակոբ , ասի-
կայ մենք գիտենք :

Միանգամայն գիտէք ալ թէ մեր աղօթք
ըրած ժամանակը ծանրախորհուրդ ըլլալու ենք ,
մեր ըսածին վրայ աղէկ խորհելու ենք , և ար-
տորալու չենք , և մեր Աստուծոյ հետ խօսած
ժամանակնիս մտքերնէս ուրիշ բաներ անցընե-
լու չենք , ըսաւ հայրը :

Ասիկայ Մարիամ ու Յակոբ գիտէին :

Ուստի աւելցուց հայրը • մէկ քանի ուրիշ
բաներ ալ պիտի ըսեմ , որոնց համար ամէն
օր աղօթք ընելու ենք : Աստուծմէ խնդրելու
ենք որ ինքը հաճի առողջութեան մէջ պա-
հել մեզ և մեզի կերակուր տալ : Ար վայլէ
որ աս բաները Աստուծմէ խնդրենք • ինչու որ
ինքը միայն կարող է զանոնք մեզի տալ : Օգ-
նոնք իրմէն խնդրելէն ետե մոռնալու չենք շը-
նորհակալ ըլլալ իր ցուցուցած մարդասիրու-
թեանը համար , որ մեզի աս աշխարհիս մէջ
այնքան բարիքներ տուած է : Աստուծմէ աղա-
չելու ենք որ մեզի օգնէ իր կամքին նազանդ
ըլլալու , անանկ որ եթէ ինքը հաճի մեզմէ մեր
առողջութիւնը կամ հանգստութիւնը վերցը-
նել կամ խնդրուած բան մը չտալ , որ ինքը
գիտէ թէ մեզի համար անօգուտ է , մենք
կարող ըլանք ըսել « քու կամքդ ըլլայ » : Մեր
սիրելի բարեկամներն ալ յիշելու ենք , և Աս-
տուծմէ խնդրելու ենք որ ինքը օրնէ զա-

նոնք և ամէն պէտք եղած բարիքները տայ
անոնց :

Մեր երկնաւոր Հօրմէն խնդրելու ենք
նաև որ ինքը մեր յանցանքները ներէ իր սի-
րելի Արդւոյն համար , որ աշխարհ եկաւ մե-
ղաւորները փրկելու . և եթէ զգանք որ մեր
վերջին ըրած աղօթքներէն ետև չար բան մը
ըրած՝ ըսած՝ կամ խորհած ենք , անիկայ խոս-
տովանելու ենք , և իրմէն օգնութիւն խրնդ-
րելու ենք որ կարող ըլլանք ուրիշ ժամա-
նակ ալ չընելու :

Մենք չենք կրնար իրօք զղջալ կամ սրը-
տերնէս տրտմիլ մեր մեղքերուն համար , ա-
ռանց Աստուծոյ Սուրբ Հոգիին օգնութեա-
նը . ուստի բնաւ մոռնալու չենք Աստուծմէ
իւր Սուրբ Հոգին խնդրել որ օգնէ մեզի զղջալու
և տրտմելու , և մեզ սուրբ պահելու :

Հիմա իմ ըսելիք մեծ ճշմարտութիւնս պի-
տի զրուցեմ : Աստուած խօսք տուած է թէ
ինքը իւր Սուրբ Հոգին իրմէ խնդրողներուն
պիտի տայ :

Ո՛հ՝ որչափ բարերար է Աստուած մեզի :
Ինքը ամենէն բարերար ծնողքէն աւելի բա-
րերար է : Ինքը աղօթքի մէջ մեր իրմէն
խնդրածէն կամ միտքերնիս բերածներէն ա-
ւելին կու տայ մեզի : Ձեզի պէս պզտիկ

տղաքները անգամ կրնան Մատուցմէ իր Սուրբ
 Հոգին խնդրել . և թէ որ սրտանց խնդրէք ,
 խնդրուածքնիդ պարսպ չպիտի ըլլան :

ԳԼՈՒԽ Խ ԽԳ

Ե Լ Ա Կ Ն Ե Ր Ը

Մատեն ետե աշուն կու գայ : Աշնան օ-
 րերը ամառուան օրերուն պէս երկայն չեն , և
 ան ատենները Մարիամ ու Յակոբ չէին կրո-
 նար իրիկուրները դուրս ելել պտրտելու , հա-
 պա առտուրները շատ անգամ դուրս ելելով
 երբեմն բլուրը՝ ձկնօրսներուն տուները և ծո-
 վեղերքը կ'երթային , երբեմն գերեզմանատու-
 նէն անցնելով արտերը կ'երթային , և երբեմն
 ալ իրենց բնակարանին ամենէն մօտ եղած
 գիւղերը :

Անոնք ցորենի արտերը առաջ տեսեր էին՝
 անոնց կանաչ ծիղերը հողէն դուրս ելելու
 սկսած ատեննին . և հիմա ալ ցորենը ժող-
 վուած և արտերէն վերցուած և շտեմարանը
 դրուած կը տեսնէին : Իրենց պարտեզին մէջ
 եղած պտղատու ծառերուն առաջին ծաղիկը
 տալը տեսեր էին , և հիմա ալ անոնց անուշ

և զուարճալի պտուղները կը վայելէին : Խըն-
 ձորները միայն ծառերուն վրան մնացեր էին , և
 անոնք ալ դրեթէ ժողովուելու պատրաստ :

Աշուներ հիմա հասեր էր . և ան ատենը
 աշնան ընծայ մը եկաւ Մարիամին հօրը : Ա-
 սիկայ խել մը պզտիկ ելակի (չէլէի) տունկեր
 էր : Բարեկամ մը Մարիամին հօրը խրկեր
 էր զանոնք իր պարտէզը տնկելու համար : Ան
 տեսակէն քիչ կը գտնուէր , և շատ ալ աղւոր
 էին , և ինքը շատոնց կը փափաքէր իր պար-
 տէզին մէջ ունենալ անոնցմէ :

Շատ հոգ տանելու ենք ասոնց , ըսաւ հայ-
 րը , իր պզտիկ աղջըկանը , որ իր քով կայներ
 էր զանոնք բացած ժամանակը : Ասոնք զատ
 տեղ մը տնկենք և գալ ամառ թէ որ ողջ մը-
 նանք՝ գուցէ ելակ պիտի տեսնենք անոնց վը-
 րայ ծիրանի (Գայեաի) չափ խոշոր :

Ամէնը տասներկու տունկ կար , և պարտէ-
 զին մէջ զատ տեղ մը տնկեցին զանոնք :

Աշունէն ետեւ ձմեռը եկաւ : Յուրտ և խո-
 նաւ ձմեռ մըն էր , և Մարիամին հայրը մէկ
 քանի անգամ ըսաւ թէ՛ վախնամ որ պզտիկ
 ելակի տունկերը ցուրտէն և խոնաւութենէն
 փտտին :

Չմեռէն ետեւ գարունը եկաւ , բայց ուշ
 և ցուրտ : Տունկերէն վեց հատը փտտեր էին ,

և միւս վեց հատն ալ շատ պզտիկ և տկար
մնացեր էին : Արբոր ելակի ծաղիկներուն ժա-
մանակը եկաւ , տունկերէն միայն մէկ հատը
ծաղիկ բացաւ , և անիկայ ալ միայն չորս հատ :

Աս աղւոր խոշոր տեսակէն քիչ ելակ պիտի
ուենենանք աս տարի , ըսաւ հայրը , երբոր տը-
ղաքներուն հետ պարտէզը կը պտըտէր , բայց կը
յուսամ թէ չորս հատ պիտի առնենք • ուստի
մէկը պիտի ըլլայ սիրելի մօրդ , և մէյ մէկ ալ
երկուքիդ , և մէկն ալ ինծի :

Ասկէց ետքը Մարիամ ու Յակոբ աս տուն-
կը ամէն օր կը նայէին : Անոնց կարծիքին նայե-
լով ելակները շատ ուշ կ'ելլէին , բայց վեր-
ջապէս ծաղիկները թափեցան և չորս ելակ
տեսնուեցաւ : Օրէ օր անոնք կը մեծնային •
բայց ո՛հ որչափ ժամանակ տեւեց մինչև որ ա-
նոնք հասունցան :

Հայրը կրցածին չափ ելակները կը պաշտ-
պանէր թռչուններէն և խխունջներէն , (սալ-
եանկէօզ) և օր մը ըսաւ • կարծեմ շաբաթ
մը չքշեր հասուն ելակ կը ժողվենք • քանզի
իրօք ալ շատ խոշորցեր էին : Այնչափ խո-
շոր ելակ բնաւ տեսած չէր Մարիամ • և
շատ անգամ իր հայրը հոն տարեր էր զա-
նոնք ցուցունելու :

Հասունցած աստե՛ննին օր մը երբոր անոնք

նայելու կ'երթային , հայրը ըսաւ , կարծեմ
թէ վաղը կրնանք քաղել զանոնք :

Հետեւեալ օրը հայրը մինակ պարտէզը դը-
նաց ելակի տունկին քով ան չորս աղւոր ելա-
կը քաղելու , բայց բան մը չէր մնացեր : Ար-
բոր տուն դարձաւ , հոն տիկին մը կար , որ
Մարիամին ու Յակոբին մօրը հետ տեսու-
թիւն ընելու եկեր էր : Հայրը իր հիմակուան
զգացած տրամուլթիւնը աս տիկինին պատմեց :

Ահ , ըսաւ տիկինը , չեմ զարմանար ասոր ,
գուցէ քու պզտիկ զակրներդ ձիտեն ելակ-
ներուն ուր ըլլալը : Տղաքները պտուղ շատ
կը սիրեն , և չենք կրնար զանոնք մինակ պար-
տէզը թողուլ պտուղի հասուն ատենը : Ընոնք
անշուշտ ամէն բան կը խառնեն , և ան բա-
ները կ'ուտեն՝ որ պէտք չէ ուտել :

Ես չեմ կարծեր թէ Մարիամ ու Յակոբ
ան ելակները կերած ըլլան , ըսաւ հայրերնին ,
բայց հիմա կ'իմանանք :

Ըն ատենը զանգակը չալեց , և սպասաւո-
րին հրաման ըրաւ որ Մարիամն ու Յակոբը
իրեն խրկէ : Արբոր անոնք սենեակը մտան ,
հայրերնին հարցուց . Ըն չորս խոշոր աղւոր
ելակները դո՞ւք փրցուցիք ու կերաք :

Չէ հայր , պատասխանեցին երկուքն ալ :

Ես ձեզի կը հաւատամ սիրելի տղաքներս ,

ըսաւ Տայրը • բայց կը տրտմիմ ըսել թէ մէկը՝ որ պէտք չէր անանկ ընել , ան ելակները առած գացած է , և մեր յուսացած վայելքէն մեզ զրկած է :

Մարիամ ու Յակոբ շատ ցաւեցան ասիկայ լսելու , բայց հօրերնուն «Չեզի կը հաւատամ» ըսելը , ան կորուստին տեղը լեցուց : Ահ , թէ որ պզտիկ տղաքները գիտցած ըլլային թէ որչափ զուարճութիւն պիտի զգային խօսքերնին բռնուելուն վրայ , անշուշտ անոնք միշտ ճշմարտութիւնը պիտի խօսէին :

Շատ աղէկ , ըսաւ Տայրերնին , ես կ'ուզէի միայն աս հարցումը ընել ձեզի : Աւրախեմ որ դուք ալ պատասխան տուիք , և հիմա կրնաք երթալ :

Մարիամ ու Յակոբ ան ելակները չեն առեր , ըսաւ Տայրերնին ան տիկինին , տղաքները դուրս ելելնէն ետեւ :

Տիկինը բան մ'ալ չըսաւ , բայց կ'երևար թէ ինքը չէր հաւատար տղոցը ան պտուղը չառնելնուն :

Մէկ քանի օր ետքը Տայրը իմացաւ ելակներուն առնողը , որ ո՛չ Մարիամն էր և ո՛չ ալ Յակոբը :

Ասիկայ օգտակար դաս մը եղաւ ճշմարտութեան մեծ արժէքը ան տղոցը սորվեցու-

նելու : թէ որ հայրերնին անոնց ճշմարտախօս
 ըլլալը գիտցած չըլլար , ինքը կրնար վախնալ
 որ պտուղները գուցէ անոնք առած ըլլան՝ թէև
 անոնք «չէ» ալ ըսած ըլլան . ինչու որ սուտ
 զրուցներուն չենք կրնար հաւատալ՝ թէև ճշ-
 մարտութիւն ալ խօսին :

Մարիամին ու Յակոբին հայրը ան տիկի-
 նին տունը հանդիպեցաւ , և անոր իմացուց
 ելակներուն առնողը ո՛վ ըլլալը , և չէ թէ իր
 տղաքը :

Գ Լ Ո Ւ Խ Խ Ե

Ժ Ո Ջ Ո Վ Ա Տ Ո Ւ Ն Ը

Մարիամին ու Յակոբին հայրն ու մայրը
 զանոնք իրենց հետ առած ուրիշ քաղաք մը
 գացին քանի մը մզոն հեռու , ուր իրենց մէկ
 ազգականին տունը շաբաթ մը պիտի մնային :
 Թէ որ ժամանակ ունենայի , կրնայի պատ-
 մել ձեզի թէ ինչպէս Մարիամ ու Յակոբ
 իրենց օրերը հոն կ'անցընէին , թէ ինչ նոր
 տեսարանները կը տեսնէին , և ինչ ճշմարտու-
 թիւններ նոր կը լսէին . բայց հիմա միայն մէկ
 տեսարանի մը վրայօք պիտի ըսեմ :

Ան քաղաքի ժողովատուն ըսուած մեծ տուն
 նը գացին , ուր որ շատ բազմութիւն կար :
 Արաճին (սալա) մէկ ծայրը տախտակամածը
 (փէօլէֆ) միւս տեղերէն բարձրկէկ էր . և աս
 բարձր տեղը կը նստէին մէկ քանի մարդիկ
 որ շատ զբաղեալ կ'երևային , ոմանք ձեռքեր
 նին գիրքերով և ոմանք ալ թուղթերով . և
 մէկիկ մէկիկ ոտք կ'ելէին ու բարձր ձայնով
 կը խօսէին : Վետնի ցած մասին վրայէն ան
 մեծ բազմութիւնը՝ ոմանք նստած և ոմանք
 կայնած , ան բարձր տեղը եղած մարդիկներուն
 ըսածին ու շաղրութեամբ մտիկ կ'ընէին : Մա
 րիամ ու Յակոբ լսածներնին շատ չէին հաս
 կընար , բայց իրենց նստած տեղէն կրնային
 տեսնալ գրեթէ բոլոր ան մեծ սրահին մէջ ե
 ղող մարդիկները : Աւստի շատ չէին ձանձ
 րանար հոն կենալէն , թէև հօրերնուն և
 մօրերնուն հետ հոն իրեք ժամէն էլէլ մնա
 ցին : Աերջապէս խօսողները իրենց խօսքը
 լմնցուցին , և անկէ ետքը կամաց կամաց ար
 ձակեցաւ ժողովը . և Մարիամ ու Յակոբ և
 հայրերնին ու մայրերնին կրկին ազգականներ
 նուն տունը դարձան :

Ա՛հ՝ որչափ մարդիկ կար ան մեծ սրահին
 մէջ , ըսաւ պզտիկ աղջիկը :

Շատ մարդիկ կար Մարիամ , ըսաւ հայ

ըր , սենեակը լեցուն էր , և ոմանք ալ դուր-
ար մնացեր էին որ չէին կրնար ներս մտնել :
Անոնց հոն ըլլալուն պատճառը ինչ էր , գի-
տէք : Մարիամ կը կարծեր թէ աստենախօս-
ները լսելու համար էր :

Այո , անանկ էր , ըսաւ հայրը . և ա-
նոնց ինչ բանի վրայօք խօսիլը գիտէք :

Մարիամ իր հօրը մէկ քանի բան ըսաւ որ
լսեր և միտքը պահեր էր : Անիկայ կը ցուցու-
նէր թէ ինքը մտիկ ըրեր էր , թէ և լսածին մեծ
մասը չէր հասկընար , ինչպէս որ Յակոբ ալ :

Աւրեմն անոր վրայօք քիչ մը բան ըսեմ ձե-
զի , ըսաւ հայրերնին . թէ որ դուք մէկ քա-
նի տարի աւելի ողջ մնաք և անանկ տեղ մը
երթաք , դուք լսածնիդ ինձի պատմելու էք :
Գիտէք թէ ես շատ անգամ կը պատմէի ձե-
զի ան երկիրներուն վրայօք , որոնց խեղճ տը-
գէտ բնակիչները ճշմարիտ Աստուածը չեն
ճանչնար , հասկա չաստուածներու , փայտէ
կամ քարէ շինուած կուռքերու աղօթք կ'ը-
նեն , որոնք չեն կրնար օգնել իրենց :

Մարիամ ու Յակոբ չէին մոռցեր ասիկայ :

Աստուած ան բարի մարդիկներուն սիրտե-
րուն մէջ ան խորհուրդները դրաւ իր Սուրբ
Հոգւոյն շնորհքովը՝ շարունակեց հայրերնին ,
որ ան խեղճ տգէտ մարդիկներուն ողորմին ,

և ջանք ընեն անոնց սորվեցունելու : Ամանք
 իրենց հայրենիքը ձգած հեռու երկիրներ գա-
 ցին , ան խեղճ մարդիկներուն լեզուները սորվե-
 ցան , Աստուածաշունչը և ուրիշ լաւ գիրքեր
 անոնց լեզուովը տպել տուին , մարդոց խօսե-
 ցան և քարոզեցին , և իրենց կրցածին չափ
 ամէն կերպով սորվեցուցին անոնց ճշմարիտ
 Աստուծոյն վրայօք , և թէ ինչպէս ինքը իր
 սիրելի Արդին աս աշխարհը խրկեց մեղաւոր-
 ներուն համար մեռնելու : Աս մարդիկները
 Միսիօնար կ'ըսուին :

Կան մարդիկ ալ , որոնք ան հեռու երկիր-
 ները չեն երթար , հապա հայրենիքնին մնա-
 լով կրցածնուն չափ կ'աշխատին աս գործը
 յառաջ տանելու : Անոնք ստակ կու տան Մի-
 սիօնարներ խրկելու և Աստուածաշունչ և ու-
 րիշ բարի գիրքեր տպելու համար : Ամէն մարդ
 աս կերպով մէյմէկ բան կրնայ ընել . ինչու
 որ մէկ ղուռուշով մը անգամ կրնայ օգնել
 գիտութիւնը տգէտներուն խրկելու համար :
 Չեզի պէս պղտիկ տղաքներն անգամ կարող
 են օգնութիւն ընել աս բարի գործին մէջ :

Ամէն բարեպաշտ մարդիկ , թէ հայրենիք-
 նին մնան և թէ օտար երկիր երթան , թէ շատ
 ստակ ունենան տալու և թէ քիչ , կրնան ա-
 ղօթք ընել և Աստուծոյ օրհնութիւնը խնդրել

որ խեղճ հեթանոսները իրենց չար ճամբաներէն դարձի դան և սորվին Տէր Յիսուս Քրիստոսը սիրել , և իր պատուիրանքները կատարել :

Շատ ժամանակ է որ առաջին Միսիօնարները օտար երկիրներ ելան : Անոնք մեռան , բայց ուրիշներ անոնց տեղը գացին , և ամէն տարի ալ քանի քանի հատ կ'երթան : Բան մը պիտի ըսեմ ձեզի որ պիտի ուրախանաք : Աստուած օրհնեց զիրենք և իրենց ձեռքովը մեծ շնորհքներ տուաւ շատերուն որ ատենօք շատ չար էին , բայց անոնց սիրտերը Աստուած փոխեց իր Սուրբ Խօսքը լսելէն ետև՝ որ կարող է իմաստուն ընել փրկութեան :

Հիմա այսօրուան մեր տեսած բազմութեանը վրայօք պիտի խօսիմ ձեզի : Ան ատենախօսներէն ոմանք , որոնց զրոյցները դուք լսեցիք , Բարոզիչ էին և ոմանք ալ չէին . բայց բոլորը հեթանոսներուն խեղճութեանը վրայօք կը խօսէին , և Աստուծոյ մարդասիրութեանը վրայօք , որ բարի մարդոց սիրտերը արթնցուց որ երթան անոնց սորվեցունելու , և ան մեծ օգուտին վրայօք որ ամենակարող Աստուծոյ օրհնութիւնովը եղաւ :

Ան սենեակին մէջ եղող բազմութիւնը հոն գացին յատկապէս աս բարի լուրերը լսելու ,

և տարակոյս չու թէ Կանոնք շատ ուրախացած պիտի ըլլան իրենց լսածներուն համար : Ենոնցմէ շատերը ստակ տուեր էին աս գործը յառաջ երթալու համար , և կը յուսամ թէ աղօթք ալ պիտի ընեն Եստուծոյ , որ ինքը օգնէ ան Միսիօնարներուն , և իր Սուրբ Հոգին տայ ան խեղճ մեղանչական հեթանոսներուն անոնց սիրտերը Յիսուս Բրիստոսի սիրոյն դարձունելու :

Եստուած խօսք տուած է ասանկ աղօթքներուն լսելու , և իր Սուրբ Գիրքին մէջ ըսած է մեզի որ՝ ժամանակ պիտի գայ երբ կիրը Տէրօջը գիտութիւնովը պիտի լեցուի , ինչպէս որ ջուրերը ծովը կը ծածկեն :

Գ Լ Ա Ի Ի Ի Թ Գ

Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Ե Ծ Օ Ր Ը

Շատ մեծ սենեակ մըն էր , ըսաւ կրկին Սարիամ հետեւեալ օրը . այնչափ մեծ սենեակ քնաւ տեսած չեմ : Հոն մարդ կը բընակի :

Չէ , ան սենեակին շինուելուն նպատակներէն մէկը ձեզի ըսեմ , ըսաւ հայրը : Մեր

Երկրին մէջ չար մարդիկ կան • գիտէք թէ գողեր և ուրիշ չարութիւն ընողներ կան :

Մ. յո՛ , ըսաւ Յակոբ , անիկայ գիտեմ հայր , ինչու որ անցած շաբթու էր որ մեր խնձորները պարտեզէն գողցեր էին : Աղէկ գիտեմ որ բարի մարդիկ չէին զանոնք գողցողները :

Անշուշտ անոնք բարի մարդիկ եղած պիտի չըլլան , Յակոբ , ըսաւ հայրը , ինչու որ բարի մարդիկ գողութիւն չեն ըներ : Երբոր գողերուն և ուրիշ չար մարդիկներուն չարութիւնը կ'իմացուի , շատ անգամ անոնք բանտը կը դրուին :

Ո՛հ հայր , ան սենեակը բանտ է , հարցուց Մարիամ :

Չէ , ըսաւ հայրը • ան սենեակին վրայօք քիչ մը կտքը պիտի խօսիմ : Աս չարագործները բանտը կը դրուին և հոն կը պահուին մինչև որ դատաւորը քաղաքը գայ • և ան ատենը որոշեալ օր մը , — հոս Մարիամ իր հօրը խօսքը ընդմիջեց հարցունելով , դատաւորը ո՞վ է հայր :

Դատաւորը , սիրելիս , մարդ մըն է , որուն իշխանութիւն տրուած է երկրին օրէնքներովը բանտին մէջ դրուած մարդիկը քննել և իմանալ թէ անոնց վրայ ձգուած չարութիւնները իրաւ ըրած են թէ չէ : Ինքը ան

մեծ սենեակը կը մտնայ , և ան մէկ ծայրի քուտեամբ բարձր աթոռիդ վրայ կը նստի • քովը ուրիշ մարդիկնէր ալ կան որ կ'օգնեն բանտարկեալին քննութեանը , և երբոր անոնք պատրաստ ըլլան , բանտարկեալները մէկիկ մէկիկ անոր առջին կը բերուին : Են ատենը դատաւորները անոնց դէմ ըսուածները մտիկ կ'ընեն , ու նաև անոնց կողմանէ ըսուածներն ալ : Թէ որ բանտարկեալին չարութիւն ըրած ըլլալը չհաստատուի , կ'արձրկուի • բայց թէ որ երկրին օրէնքները կոտորած ըլլալը ստուգուի , դատաւորը հրաման կու տայ որ օրէնքին համեմատ պատժուի : Իմ սիրելի աղջիկս , քեզի հաճոյ կ'ըլլայ դատաւորի մը առջին կայնիլ և չարութեան համար քննուիլ :

Չէ , ճշմարիտ որ չէ , ըսաւ Մարիամ :

Իմ սիրելի տղաքս , գիտէ՞ք թէ օր մը դատաւորի մը առջին պիտի կայնիք :

Ո՛հ հայր , ըսաւ Յակոբ :

Յիրաւի ինչ որ կ'ըսեմ ճշմարիտ է , ըսաւ հայրը • Եստուածաշունչին ըսածը ըսեմ ձեզի , և գիտէք որ անիկայ ճշմարիտ խօսք է • հոն կ'ըսէ « Եմէնքս ալ Քրիստոսի ատեանին առջևը պիտի կայնինք » :

Ի՞նչ , իմ սիրելի տղաքս՝ հոն պիտի ըլլաք • ճնողքներնիդ ալ հոն պիտի ըլլան • աս

աշխարհիս բոլոր բնակիչները հոն պիտի ըլլան :
 Երեկուան տեսածներնիդ մեծ բազմութիւն մը
 սեպեցիք • բայց ո՛հ ինչպէս մեծ ժողովք մը
 պիտի ըլլայ ան , երբոր բոլոր մեռելները յա-
 րութիւն առնեն և Քրիստոսի արթողին առ-
 ջևը մէկ տեղ գան դատուելու :

Ան ատենը աս աշխարհիս մէջ մեր բոլոր
 ըրածները՝ ըսածները և խորհածները առջե-
 նիս պիտի դրուին :

Ան ատենը երկու մեծ բաժանում պիտի
 ըլլայ , մէկը Աստուծոյ ժողովուրդը , և միւսը
 աշխարհի ժողովուրդը • անոնք՝ որոնց մեղքե-
 րը ներուած են , և անոնք՝ որ Աստուծոյ թըշ-
 նամի մեռած են : Աստուծոյ ժողովուրդը դա-
 տաւորին աջ կողմը պիտի կայնի , և միւսը
 ձախ կողմը :

Ան ատենը Տէր Յիսուս Քրիստոս իր աջ
 կողմը եղողներուն պիտի ըսէ • «Այլէք՝ իմ
 Հօրս օրհնածները , աշխարհի սկիզբէն ձեզի
 համար պատրաստուած թագաւորութիւնը ժա-
 ոանգեցէք» • և անոնք երկինքը պիտի ըն-
 դունուին փառքով և երջանկութեամբ յա-
 ւիտեան հոն կենալու :

Անկէ ետքը դատաւորը իր ձախ կողմը ե-
 ղողներուն պիտի ըսէ • «Ա՛յլզի՛ գացէք ինձ-
 մէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջ ,



որ պատրաստուած է Սատանային՝ ու իր հրեշ-
տակներուն՝ • և անոնք դժոխք պիտի երթան ,
ուր որ միայն ցաւ ու տրտմութիւն պիտի ըլ-
լայ յաւիտեանս յաւիտենից :

Եսոր վրայօք պիտի մտմըտա՞ք՝ իմ սիրելի
տղաքներս , և ամէն օր աղօթքով Տէր Յի-
սուսի պիտի երթա՞ք , և իրմէ խնդրէք որ ինքը
ձեր բարեկամը ըլլայ հիմա ու միշտ :

Ես բաները լսելնէն ետև Մարիամ ու Յա-
կոբ շատ կը մտմըտային : Ա՛րդացող , դուն
ալ աս գիրքին մէջ եղած աս և ասոր նման
ուրիշ մեծամեծ ճշմարտութիւններուն վրայօք
չե՞ս մտմըտար : Ի՞նչ ալ Եստուծմէ շնորհք
խնդրելու ես որ՝ հաւատքով արդարացած և
Քրիստոսի արիւնովը սրբուած՝ դատաստանի
մեծ օրը դատաւորը քեզի բարեկամ դտնես :

